



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### **Usage guidelines**

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.


### **About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

GRAD  
EREN  
905  
BUHR

**B** 1,225,953








№ 1 Հրատարակութիւն «Ռազմիկ» ի

# Առիւծին Թանիֆէն

( ԼՐԱՆՏԱՐԿԵԱԿ ԽՐ ՅԻՆԱՏԱԿԱՐԱՆԷՆ )



ԳՐԵՑ  
ՀԱՅ ԱՔՍՈՐԱԿԱՆԸ



ՏԳ. «ՌԱԶՄԻԿ», Ի

ՅԻԼԻՊԸ

1906

ԱՅՆԻՆՆԵՐԸ ԵՎ ԳՐԱՆՏԱՐԿԵԱԿՆԵՐԸ ԵՆԻՆՆԵՐԸ

1. ~~\_\_\_\_\_~~

2. ~~\_\_\_\_\_~~

3. ~~\_\_\_\_\_~~

4. ~~\_\_\_\_\_~~

5.

Amestian zhoukeu

# Առիւծին Եանիէն

( ԲԱՆՏԱՐԿԵԱԼԻ ՄՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԷՆ )



ԳՐԵՑ

ՀԱՅ ԱՔՍՈՐԱԿԱՆԸ



ՏԳ. « ԴԱԶՄԻԿ » Ի

ՅԻԼԻՊԷ


1906





ՀԵՄ  
ԵՄ  
ՉԵՄ

# ԱՌԻԻԾԻՆ ԺԱՆԻՔԷՆ



**Ը** Ն Կ Ե՛ Ր, ահա ճամբան, ստեղծագործ երազ-  
ներու, խնդախումբի, փառքի անսովոր ճամբան, ուրկէ  
կը քալես արիարար. հերոսական, հրաշայլ է անիկա՝ որ  
քեզ կ'ատաջնորդէ, բայց լի անգութ անստուգութեամբ,  
անսպասելի փորձութեամբ ու վատ անակնկալներով:

Հգօր է Ազատութեան սէրը՝ քան մահը ինքն իսկ,  
և դուն յօժարակամ՝ պատրաստ ես ամէն անձնուի-  
րութեան:

Ինքնակամ յանձն առած ես տառապանքը, զրկանքը,  
յանձն առած ես մոռնալ բոլոր սէրերը, համակերպիլ  
ամէն թշուառութեան, կրել բոլոր տանջանքները,  
անցնիլ անօթութեան, արհամարհանքի ու վշտի բոլոր  
փորձութիւններէն՝ որոնք հայրենանուէր կամաւորին  
կեանքի անբաժան ընկերն են:

Պարտականութեան լայն գիտակցութիւնը ունիս  
արդէն և հպարտ ես: Գիտես որ ճամբան մշուշոտ է,  
վտանգաւոր, բայց սիրտդ ո՛չ մէկ վհատութիւն, ո՛չ  
մէկ տագնապ, ո՛չ մէկ տկարութիւն կը զգայ. յաղթա-  
նակի հաւատքը խո՛ր է մէջդ, անպարտելի, խրոխտ ու  
անսասան:

Ա՛հ, ճշմարիտ յեղափոխական զինուորն ես ուրեմն,  
արժանի՛ ջու գրոչակիրդ:

Հետևաբար, հաւատքի նոր զօրութիւն մը, գաղա-  
փարի նօթ ներշնչում մը չէ որ պիտի գտնես այս էջե-  
րուն մէջ: Ինչ որ այս գրքոյկը քեզի պիտի ըսէ՝ ան է  
որուն վրայ գուցէ անփոյթ աշհամարեանքով ծիծաղած  
ես, որը գուցէ երբէք մտաբերած չես, կամ տարտամօ-  
րէն, անցողակի կերպով յիշած երբեմն, և որուն վրայ  
սակայն անհրաժեշտ է որ ահողջական ծանօթութիւն  
ունենաս:

Անհրաժե՛շտ է, ոչ միայն ջու անձիդ համար՝ որ  
այնքան պէտք, այնքան թանկագին է Հայրենիքին ու  
Մարտնջումին, այլ անհրաժեշտ է մահաւանդ պաշտած  
Գաղափարիդ չանբուն տեսակէտովը:

Կը հարցնեմ՝


— Գիտե՞ս Գառական Օրէնքները՝ որոնց հետ վաղը  
միւս օր անսխլական գործ պիտի ունենաս և որոնց  
պէտի բաղխի ճակատդ առաջին անգամ:

Գիտե՞ս Թուրքիոյ դատաստանական հարցաքնն-  
նութեանց թէ միայն սպօքբիթ այլ նաև արդարութեան  
անուր պզտոյ օրինական պայմանները:

Բայց, գիտե՞ս միւսոյն ատեն թէ՛ ջու ինչպէսնուև  
Յեղափոխութեան պատիւը կախուած է նաև այդ գի-  
տակցութենէդ:

Դեռ աւելին կայ. անձիդ ազատութիւնը և անձէդ  
աւելի նախնական՝ ջու ունեցած յեղափոխական գաղտ-  
նիքներուդ փրկութիւնը՝ այդ դիտակցութեանդ հետ  
կապուած է:

Քանի՛ ջանի պատուական հերոսներ զո՛ւ գացին դա-  
տաստանական օրէնքներու իրենց ագիտութեանը, քա-  
նի՛ ջանիներ չղթայակապ կը հեծեն այսօր՝ հետու կեն-



գանի կեանքէն, հեռո՛ւ կռուող շարքերէն, կիսաւարտ թողելով իրենց պարտականութիւնը, այնքան ածան ծախելով իրենց ազատութիւնը: Եղան նոյնիսկ շատեր, աւա՛ղ, որ ծանօթութիւնն չունենալով ոստիկանական դաւերու ու նենգ մեքենայութեանց՝ անարդարանալի միամտութիւնն ու փորձութիւնն ունեցան աղիտաբեր յայտնութիւններ ընելու:

Բայց, նոյնքան ճշմարիտ է նաև թէ՛ ունեցած ենք բիւր անգամ պաշտելի բազմաթիւ հերոսներ ալ, որ աննման արթնամտութեան, կամքի անխորտակելի տուկունութեան հիանալի օրինակներ տուած են զնտաննեբու, սանջանքներու, անօթութեան և անքունութեան բոլոր զարհուրելի փորձութեանց մէջ, և յաղթական ու անպարտ դուրս եկած բանտէն: Յաղթական դուրս եկած են՝ որովհետև արդէն կանխաւ պէտք եղած ծանօթութիւնը ունեցած են ոստիկանական ու դատական խորամանկ միջոցներուն վրայ. գիտցած են թէ ի՛նչ դիրք պէտք է բռնել և ինչպէս տալ պատասխանները: Հազարաւորներու մէջէն կարելի է յիշել Սասունի Հրայրը, այն հրաշալի կտրիճը՝ որ մօտաւորապէս մէկ ամիս Արամ Արամեանի հետ անլուր սարսափներու դիմադրեց Կարնոյ բանտին մէջ, և իր հոգեկան ուժն ու մտքի արթնութիւնը անցաւ մարդկային ամէն սահմաններէ. ոստիկանութիւնը ոչ մէկ խոտալանութիւն կրցաւ փրցնել իրմէ, հաստատապէս համոզուած իսկ ըլլալով թէ Արամեանկը յանցաւոր էր: Բայց, դաստարանը ապացոյց չի գտաւ զայն դատապարտելու և անպարտ արձակեց:

Յաղթանակը կրկնապէս ջախջախիչ ու վհատեցուցիչ է՝ երբ բռնաւորները ոռնան անկարող ու յեղափոխական գինուորը անընկճելի մնայ իր բարոյական բարձրութեան վրայ, երբ իր կամքին ու գիտակցութեան ու-

ժողովը արհամարհէ ամէն տանջանք, խորտակէ ամէն ցանց և դուրս գայ ճակատաբաց, բարձրագլուխ ու հպարտ:

Մի' մոռնար, ընկե՛ր, թէ բոլոր կեանքիդ արժէքն ու յեղափոխական անուանդ պատիւն է որ մաքուր կամ արատաւոր դուրս պիտի գայ այդ անխճեալ դռնէն. մի' մոռնար թէ ո՛չ միայն ընկերներուդ, այլ աշխարհքի բոլոր աչքերն են որ մութին մէջէն քեզ կը դիտեն, կը հսկեն քու արիւթեանդ և կը հետեւին հողիիդ մեծութեանը: Վա՛յ քեզի՝ եթէ տկարացար, եթէ սայթաքեցար. տխուր սև քօղ մը պիտի ծածկէ անկէ ետք քու անցեալ ամէնէն գեղեցիկ գործերդ անգամ, որոնք պիտի հալին ու անհետանան՝ ինչպէս ձիւնը տիղմին մէջ: Մի' մոռնար թէ՛ թշնափին առջև, նոյնիսկ քու խոստովանութիւնդ խլող բոնուոր ու անգութ Հարցաքննիչին առջև իսկ բարոյապէս պիտի ցածնաս, պիտի ստրկանաս ու քու յեղափոխականի շլացուցիչ հմայքդ մէկ վայրկեանի մէջ պիտի չքանայ ու պղծուի:

Հիմա հետեւինք քեզի հետ ոստիկանութեան առաջին դռնէն՝ դէպի Թուրքիոյ մութ Արդարութեան բոլոր հանգրուանները, որոնցմէ ճակատագրականօրէն ամէն հայ երիտասարդ հաւանականաբար դատապարտւած է անցնելու՝ կեանքի մէջ գէթ մէկ անգամ:

## ՈՍՏԻԿԱՆԱՏՈՒՆ ԿԱՄ ՓՕԼԻՍ ՏԱՅԻՐԷՍԻ

### Ուրացում

Ձերբակալութեանդ առաջին օրն է և դուն հիմա կը գտնուիս Գօմիսէրին տրամադրութեան տակ:

Ոստիկանութիւնն է որ պիտի ընէ քու առաջին հարցաքննութիւնդ և ա՛ն է որ պիտի աշխատի խլել գաղտնիքներդ: Ուստի, պատրաստ եղի՛ր և հաւաքելով բոլոր ուժերդ, յիշէ փրկութեան առաջին ու վերջնական պատուէրը՝ ուրացո՛ւն, ուրացո՛ւն, դարձեալ ուրացում:

Բայց, նախ քեզի համար առանձին ծրագիր մը պատրաստած ես, յանկարծակիի չի գալու համար: Որովհետեւ խոհական և հեռատես գործիչ մը պարսաւոր է միշտ կանխապէս մտածած ըլլալ այն բոլոր հանգամանքները, որոնց կրնայ օր մը դիմագրաւել ինքը. ուստի, անոնց համաձայն պէտք է ծրագիր մը ունենայ իր մտքին մէջ, կշռուած՝ պատահականութիւններու վրայ ու յարմարացուած անոնց՝ զգուշուոր կերպով: Այսպէս, իր բռնելիք ընթացքը որոշ ու իր ինքնապաշտպանութիւնը հեշտ է այլևս:

Ունի՞ս այս տեսակ ծրագիր մը:

Ենթադրենք, ընկե՛ր, որ մեծագոյն սխալը գործած ես՝ չունենալու այդ ծրագիրը. ա՛րդ, ի՞նչ պէտք է պատասխանես և ի՞նչ ընթացքի պէտք է հետևիս՝ թակարդի մէջ չիյնալու համար:

Ինչպէս ըսինք, կը կրկնենք. Թուրքիոյ դասաստանական հարցաքննութիւններէն անմեղ զուրս դալու միակ միջոցն է՝ ՈՒՐԱՆԱԼ ամէն յանցանք, ամէն ամբաստանութիւն, ամէն մեղադրանք, ուրանալ անխնայ՝ մինչև անգամ այն բոլոր եղելութիւնները՝ որ հրապարակով յայտնագործուած են, որոնց վկաներ կան, որոնց հանդիսատես եղած են բազմաթիւ մարդիկ. ուրանա՛լ՝ այն բոլոր ապացոյցները՝ որ հեռուէն կամ մօտէն յսնցանքը կը շօշափեն:

Ուրացումն է որ պիտի կազմէ փրկութեանդ առաջին

խաբիսիւր, առաջին հիմնաքարը: Որովհետեւ, եթէ խոստովանեցար յանցանքդ, եթէ տուիր գողանիքդ՝ այլևս օրէնքին առջև մութ բան չի մնար, այլևս փրկութեան բոլոր դռները երկաթէ նիւթերով զոցուած են՝ քաւ առջևդ, քանի որ քաղաքական ո՛չ մէկ յանցանք կարգաւորանայ բռնապետական երկիրներու մէջ, քանի որ գաւառորդները կը նմանին բժիշկի մը, որը գիտնալով հիւանդութեան տեսակը, ճանչնալով ախտը, պիտի նայի բժշկական դեղագրքին ու պիտի ընդօրինակէ միայն: Դատաւորները համոզուելով յանցաւորութեանդ, մէկ բան ունին ընելիք միայն. դիմե՛լ Պատժական Օրինագրքին այսինչ ու այնինչ տրամադրութեան և սորչել պատիժիդ չտիր:

Սրբ խոստովանութիւններ, յայտնութիւններ ըրած ես, ինչո՞վ պիտի պաշտպանես քեզ, ինչպէ՞ս կուզես որ փաստաբանդ կամ դատաւորները քեզ արդարացնելու փաստ գանեն:

Բռնութեան ամէն զէնք պէտք է գործածել ի՛ր դէմ: Թրքական Օրինագիրքն ալ՝ ուրիշ ազգերու օրինագրքերուն նման ունի հետեւեալ պատուէրը.

« Աւելի շու է որ շաս ըր յանցաւորներ անպատիժ մնան, քան մեկ անմեղ դատաւարտութիւն կրի: »

Այս կէտն է՝ որ հիմը կը կազմէ դատաբաններու բարդ կազմութեան և անոնց ձեռք առած օրինական զգուշութիւններուն: Դատաբանը կամայ ակամայ ստիպուած է իր առջև Ամբաստանեալ ներկայացողին կողմը բռնել, աւելի՛ անոր պաշտպանութեանը միջոցներ ու դիւրութիւններ տալ՝ մինչև որ զօրաւոր ու անտարակուսելի փաստեր գան հաստատելու անոր յանցաւորութիւնը: Ահա՛, բուն իսկ այս հիմնակէտէն մեկնելով է որ պէտք է խուսափիս ամէն խոստովանու-

Թանկ և քու շրթունքներովդ չի յայտնես ո՛չ մէկ բան  
քեզի համար եղած ամբաստանութեանց նկատմամբ:

Պէտք է դատարանը թողուս վարանումի, ինարխա-  
փումի և տարակոյսի մէջ: Պէտք է անձիդ պաշտպա-  
նութեանը համար զէնք թողուս փաստարանիդ:

Ս. Կաստարանիդ զէնքը՝ դատարանին այդ խար-  
խափումը, մթութիւնն է, քու պահելիք հաստատակա՞ծ  
լուծիւնդ է, ընկե՛ր,

Ձերբակալութեանդ առաջին օրն է, կրէնք, և դուն  
կը դռնուիս ոստիկանութեան հսկողութեանը տակ:

Պէտք է անցնիս փորձութեանց շարքէ մը հիմա:

## Ա. Ա Վ Յ Ի Ն Ի Մ Ա Ր Գ Ա Ֆ Ն Ո Ւ Յ Ի Ն

ԱՌԱՋԻՆ ՓՈՐՉՈՒԹԻՒՆ. — Ի իւրիշափէն մեկն կամ  
Ամեն յարաբերութենէ արգիլուս: Չրկուած ես արտաքին  
աշխարհի բոլոր յարաբերութիւններէն: Արգիլուած է  
քեզի խօսիլ՝ ոչ ոքի հետ, արգիլուած է գրել դուրսը  
ո՛չ մէկ անձի, արգիլուած է նշանացի ամէն յարաբե-  
րութիւն:

Ոստիկանական հաղար աչքեր կը լրտեսեն քեզ  
գաղտնածածուկ՝ ամէն կողմէ, ամէն անկիւնէ, յայտնի  
ու թաքուն ամէն ծակէ:

Չգուշութիւն:

Յարաբերութեանց այս արգիլումը կամ ի իւրիշափէն  
մեկնը պէտք է տեւէ առ առաւելն 15 օր, բայց որով-  
հետեւ թուրք ոստիկանութեան կամայականութիւնն ու  
քանութիւնները անսահման են, այդ ժամանակամիջոցը  
կարող է երկարել ամիս մը ու դեռ աւելի:

Առաջին գիշերը՝ կուգան քեզ առաջնորդել Գօմի-



սէրին առջև, ուր պիտի տաս առաջին հարցաքննութիւնդ:

Բայց, հարցաքննութեան անցնելէ առաջ՝ հարկ է որ մէկիկ մէկիկ ստորագրես խուզարկութեան միջոցին քովէդ կամ տունէդ ձեռք անցուած թղթեղէններդ: Եթէ վտանգաւոր բաներ չիկան անոնց մէջ՝ դո՛ւն եղիբ պահանջողը՝ որպէսզի անոնց ամէնուն վրայ ստորագրութիւնդ նշանակես հատիկ հատիկ. որովհետև, կարող է կառավարական այս կամ այն պաշտօնեան ո՛ր և է վտանգաւոր թուղթ մը խառնել անոնց մէջ և այսպէս անխղճօրէն խաղալ կեանքիդ հետ: Այս կարգի վատանուն դէպքեր՝ բազմաթիւ են թուրք ոստիկանութեանց գիշահոտ տարնագրութեանց մէջ: Կը պահանջես, ու եթէ մերժուեցար, ետքէն դատարանին առջև բողոքելու փաստ մը ունեցած կ'ըլլաս:

Իսկ եթէ թղթեղէններդ կը պարունակեն վտանգաւոր գրութիւններ՝ կարելի եղածին չափ աշխատիբ խուսափիլ անոնց վրայ ստորագրութիւն դնելէ. հակառակ պարագային, երբ բռնադատուած ես ստորագրել՝ պէտք է զանոնք չէզոքացնելու, անոնց տէրը չըլլալու միջոցներ խորհիս և ստեղծես:

Գօմիսէր պէկը! կը սկսի հարցաքննութեանդ ու փօլիս մըն ալ գրի կ'առնէ: Նախնական հարցումները հասարակ, սովորական բաներ են. անունդ, ժականունդ, տարիքդ, արհեստդ և ուսմանդ չափը ու գիտցած լեզուներդ:

Ասոնց մէջէն ամէնէն նշանակելին վերջին կէտն է:

Պէտք է երևութապէս ձևսնաս միամիտ, որչափ կարելի է քիչ ուսեալ և քիչ գիտուն: Որովհետև, յանցանքդ՝ համեմատական է գիտակցութեանդ չափին:

Եղած են անփորձ երիտասարդներ՝ որ շոշոկանքն

են ունեցեր յայտնելու ոստիկանութեան թէ իրենք քանի մը լեզու կը կարդան ու կը գրեն, ևն. ևն. Պատահի որ գիտցած ալ ըլլան, խնդիրն ա'ն է որ ակադեմական քննութիւն մը անցնելու կոչուած չեն իրենք հոտ և աչքի առջև ունենալու են թէ ոստիկանութեան մը հետ է գործերնին:

Տգէտ մը միշտ 'նուազ պատասխանատու է օրէնքին առջև՝ քան ուսեալ մը: Եւ թրքական հալածանքը ուղղուած է մասնաւորաբար մեր մտաւոր ուժերուն, մեր բարոյական և տնտեսական կարողութիւններուն դէմ: Ուստի, ծածկէ մտաւոր վիճակիդ իսկութիւնը, մի՛ ըսեք թէ քանի մը լեզու է կը հասկնաս, մի՛ ցոյց տար թէ զարգացած մըն ես:

Տարրական հարցումներուն կը հետևին աստիճանաբար կարևորները: Պատասխաններդ պէտք է ըլլան: կարճ, ամիտի և միշտ բացասական: Կարևոր և անհրաժեշտ է չի խօսիլ երկար բարակ, հետու մնալ մանրամասնութիւններէ և դէպքերու ընդլայնումէն, որովհետև շատ անգամ այդ քու երկրորդական ու անկարևոր սեպած պարագաներուդ պատմութիւնը՝ նոր դուռ կը բանայ յայտնութիւններու, ուրիշ խուզարկութիւններու, ուրիշ հարցաքննութիւններու: Արդէն Հարցաքննիչին նպատակն է միշտ լրացուցիչ տեղեկութիւններ քաղել քեզմէ, որպէսզի անոնց օժանդակութեամբը կարող ըլլայ ինքը նոր հետքեր գտնել և քու լրած կայ չի յայտնած պարագաներուդ վրայ կողմնակի լուսաբանութիւններ ձեռք բերել:

Կարճ, ամիտի և կարուկ պատասխաններդ այն առաւելութիւնն ալ ունին՝ որ դիւրաւ կրնաս միտքդ պահել զանոնք և յիշել հարկ եղած ատենը: Հարկ եղած ատենը՝ կրսենք, որովհետև մէկ, երկու, երեք հարցա-

քննութիւններով չէ որ պիտի կրնաս ձեռքդ անջնաս դուրս քաշել վագրին կոկորդէն:

Ենթադրենք թէ առաջին հարցաքննութիւնդ շատ յաջող տուիր. ուրացար ամէն ամբաստանութիւն ու մեղադրանք, խօսքերդ կարճ և կտրուկ եղան ու այդ օրուան համար Հարցաքննիչը ա'լ հարցնելիք բան չունի քեզի:

Ըստ օրինի, գրաւոր հարցաքննութեանդ տակ պիտի ստորագրես: Եթէ թուրքերէն կարդալ գիտես՝ լաւ է որ դուն քու աչքերովդ մէկիկ մէկիկ կարդաս գրագիրին կողմէ արձանագրուած պատասխաններդ. երբ անոնց մէջ գտնես իմաստի չարափոխութիւններ, խեղաթիւրումներ, նպատակաւոր յաւելումներ, ևն. — որոնք յաճախադէպ են — դիտողութիւն ընելով՝ կը պահանջես անոնց սրբագրութիւնը. իսկ եթէ թուրքերէն կարդալ չես գիտեր՝ Հարցաքննիչին կարդալ կուտաս և մտիկ կ'ընես: Վերջապէս, հարցաքննութիւնդ կը ստորագրես միայն ա'յն ատեն՝ երբ բոլորովին վստահ ես անոյ հարազատութեանը: Օրէնքին քեզի ընձեռած մէկ բացայայտ իրաւունքն է ասիկա, որմէ պարտաւոր ես օգտուիլ:

Ի այց, պատահած է որ, և ասիկա ամէնէն սովորական եղանակներէն մէկն է, բռնութեան տակ ստորագրել աման քեզի՝ գրուածը, առանց մտիկ ընելու դիտողութիւններուդ կամ առանց շիտկել ուզելու եղած դիտումնաւոր խեղաթիւրումները:

Այն ատեն մէ'կ բան կը մնայ միայն քեզի ընել:

Հայերէն ստորագրութեան տակ կամ քովը աննշմարելի տեղ մը՝ բռնադատութեան քակ բաւերը գրել հայերէն:

Այս միջոցին դիմած են շատ մը գտեր՝ երբ գրու-

նուած են անյաղթելի պատահականութեանց գէմ թուքք  
Հարցաքննիչը՝ գրէթէ միշտ անդիտակ հայերէնի, չէ  
կրցած նշմարել բունդասութեան ճակ բառերը և զա-  
նոնք կարծած է ստորագրութեան մէկ մասը: Նտքէն,  
այդ բառերը իրենց նպատակոր հետեանքը ունեցած  
են հրապարակային դատավարութեան միջոցին: Ատով  
ամբաստանելը հաստատու է թէ իբ հարցաքննու-  
թիւնները ճնշումի տակ առնուած են: և ճնշումի տակ  
առնուած հարցաքննութիւն մըն ալ օրինական չէ, հե-  
տեւաբար ո՛չ ալ վաւերական:

## ՎՏԱՆՊԱՒՈՐ ԲԱՊՃԱՅԻՆ

Առաջին հարցաքննութիւններէդ կտք՝ գուցէ ան-  
հրաժեշտ ստիպողականութիւնը ներկայանայ քեզի,  
դուքը հրահանգներ, տեղեկութիւններ հաղորդելու կամ  
յանձնարարութիւններ ընելու՝ բարեկամներու, ընկեր-  
ներու կամ վստահելի ծանօթներու:

Բնականաբար պիտի խորհիս միջոցներ ստեղծել ու  
դուքի հետ յարաբերութեան մտնել:

Իրաւ է թէ շատ սնգամ արգելափակ ընկերներէ  
չտուեր հանձարեղ միջոցներ հնարած և յաջողած են  
իրենց նպատակին մէջ, իրաւ է թէ այդ հնարագիւտ  
միջոցները երբեմն փրկարար կղած են, բայց աւելցը-  
նենք անմիջապէս թէ՛ անոնք աւելի շատ աղիտարեր  
հետեանքներ ունեցած են:

Օրինակ, ընկեր մը՝ իբ տասնըրէնգօրեայ արգելա-  
փակումի միջոցին, ամէնախիստ հսկողութեան տակ  
կրցաւ աճն օր կանոնաւոր յարաբերութիւն պահել  
դուքի հետ: Միակ միջոց մը ունէր և այդ միջոցէն

կըցաւ օգտուել: Աստու իբիկուն իր տունէն կերակուր  
կը խրկուէր իբեն, բայց, որովհետեւ ինքը տեղեակ էր  
թէ դուրսէն եկած ամէն բան մանրակրկիտ քննու-  
թեան կ'ենթարկուի նախապէս փոլխաներու կողմէ,  
մտածեց եղանակ մը գտնել՝ որը կարող ըլլար աննշմա-  
րելի ու անվտանգ կերպով ծառայել իր նպատակին:  
Սիկարի թուղթի մը վրայ գրեց կարգ մը անհրաժեշտ  
ճեղքակոթիւններ, զայն պլտրեց և գրէթէ ասեղի մը  
հաստութեան վերածեց, յետոյ քակեց մէկ երկու կութ  
իւր կերակուրին իբրև ծրար գործածուող լաթին մէկ  
անկիւնէն և իր նախնակը գետեղեց հոն՝ լաթին ծայրը,  
կայրերուն ստան: Բարեբախտաբար իր տնեցիները ըզ-  
գուշութիւնն ունէին՝ բանտարկեալէն վերադարձուած  
ամէն բան խնամքով քննութենէ անցնելու և թղթի  
այդ կտորը չի վրիպեցաւ իր հասցէէն: Անկէ ետք կան-  
խորոջ հրահանգներ սալով՝ բանտարկեալը իբրև պա-  
հարան գործածեց կանաչ սոխին ծիւրը, որոնցմէ մաս  
մը իր կերակուրին իբրև աւելցուք դուրս կուտար,  
նախապէս անոնցմէ մէկուն մէջ գետեղած ըլլալով իր  
նախնակը: Այդ նամակը՝ սիկարի թուղթէ մը աւելի չե-  
ղաւ միշտ և սակայն կանոնաւորաբար դուրսը իմաց  
տուաւ այն բոլոր անցքերը՝ որ տեղի կունենային  
բանտին չորս պատերուն մէջ, որոնք ճակատագրական  
կապեր ունէին զեռ դուրսը ազատ մնացած ընկերներու,  
ինչպէս նաև նոյնինքն բանտարկեալին հետ:

Եւ սակայն ուրիշ բանտարկեալ մը՝ որ չունէր ան-  
հրաժեշտ ճարտարութիւնն ու արթնամտութիւնը՝ ծան-  
րապէս տուժեց. ահա թէ ի՛նչպէս: Ասիկա՝ անհեռատես  
միամտութիւնը կունենայ նոյնպէս թղթի կտորի մը  
վրայ գրելու քանի մը խօսք, ուր իմիջի այլոց սա տու-  
ղերն այլ «եթէ նամակս ձեր ձեռքը հասնի՝ գալ ան-

գամին ինծի իբրև ուտելիք երեք վարունգ և երկու հաւկիթ միայն խրկեցէք, ինչ որ հաստատ նշանը պիտի ըլլայ՝ թուղթիս ապահով ձեզի հասնելուն: Այս տոմսը կը դնէ նոյնպէս իր ճաշէն աւելցած ուտելիքներուն տակը, առանց անդրադառնալու թէ խիստ անապահով միջոցի մը կը դիմէ, քանի որ փօլիսները կրնան խուզարկութենէ անցնել զանոնք՝ ամանները սեփական տեղը յանձնելէ առաջ:

Արդ, փօլիսները առաջին պատենութեամբ իսկ կը գտնեն թուղթը և բնականաբար կը տեղեկանան պարունակութեանը: Ամբողջը աս չէ սակայն, ուտիկանութիւնը՝ տեսնելով միամիտ որսը ծուղակին առջև, կը ջանայ օգտուիլ առիթէն: Որոշեալ օրը՝ ահա երեք վարունգն ու երկու հաւկիթը որ կը ստանայ բանտարկեալը: Ուրեմն նամակը իր հասցէն գտեր է, ուրեմն միջոցը ապահով է, ու խեղճ երիտասարդը կը գրէ երկրորդ տոմսը՝ ծանրակշիռ, վտանգաւոր ու արգահատելի միանգամայն: Երեսուցանութիւնը կատարեալ է ու պացոյցը՝ ամէն առարկութենէ դուրս:

Այս նամակին հետեւանքով ձերբակալուեցան չորս անձեր ևս, որոնցմէ երեքը ամիսներով բանտային տազնապաներ ու զրկանքներ կրելէ ետք՝ հազիւ տղատեցան, իսկ միւսը՝ որ նամակագրին եղբայրն էր՝ դատապարտուեցաւ իր հետ 15 սարուան բերդարգելութեան:

Իխթիսթիս վեհեհեհ (յարարեցութենէ զրկում) տակ գտնուող բանտարկեալի մը համար ամէնէն վտանգաւոր բաղձանքն է՝ դուրսի հետ յարաբերութեան մտնելու գրգիռը: Այս բաղձանքը, սակայն, թէև հարկեցուցիչ է շատ անգամ, բայց ամէնէն աւելի հոգեբանական երևոյթ մըն է: Հարկեցուցիչ է, երբ կարևոր յայտնութիւններ ունիս ընելիք դուրսը, որոնցմէ կա-

խում ունի թերևս քու փրկութիւնդ և դեռ ազատ  
զանուող ընկերներուդ, այս կամ այն գործին տարած  
վութիւնը:

Մեծագոյն և զօրաւոր ուժը՝ որ կը ստիպէ քեզ, կը  
թելադրէ, կը մղէ դէպի դուրսի ազատ յարաբերութիւ-  
նը — քանի որ գրէթէ ամէն քաղաքական յանցաւոր  
աւելի կամ պակաս անհրաժեշտութիւն մը կունենայ  
դուրսը հաղորդելիք — կապանքի, սանամտափակումի ա-  
ռաջին անգամ հանդիպող և դեռ բանտային համբերա-  
տար կեանքին անլարժ հոգիիդ մէկ բուռն պահանջն է:

Այդ պահանջին է որ պիտի դիմադրես առաջին օրե-  
բուն, ընկե՛ր, և այդ պարագային է որ պիտի գործա-  
ծես մտքիդ յստակատեսութիւնը: Պէտք է դիմատ թէ  
դուրսէն քեզի համար ներս բերուած ամէն առարկայ  
կանխաւ մանրակրկիտ խուզարկութենէ մը կ'անցնի  
ստիկանութեան ձեռքին տակ: Կը քննութիւն անհողի-  
նիդ բուրդերն ու բամպակները, ճերմակեղէններդ, ու-  
տելիքդ: Կտորներու բաժնելով՝ կը նային քեզի համար  
եկած հացին մէջը, նոյնիսկ սիկարին տուփը կը բաց-  
ուի և հետաքրքրութեան առարկայ կ'ըլլայ:

Ոստիկանութիւնը դժոխային բոլոր միջոցներուն  
լաւտեղեակ է՝ զանոնք գործածելու համար զոհին իբ-  
րև դաւ: Անիկա վարժութեամբ, այնքան սուրի-  
ներու անիծեալ փորձառութեամբը գիտէ թէ բանտար-  
կեալ մը հոգեպէս ո՛րքան հիւանդ, ո՛րքան անբնական  
վիճակի մէջ է. գիտէ անոր տուայտանքը, անոր ձեռք-  
տունները, անոր զգացած բոլոր յոյզերը. հետևաբար  
կը սպասէ ակնդէտ՝ որ անիկա առնէ առաջին սխալ  
քայլը, անձնատուր ըլլայ:

Յարաբերութենէ արգելումի միակ նպատակը ուրիշ  
բան չէ, այլ միայն ա՛յն որ՝ բանտարկեալը միայնակ:

լուռ և անմիջական շփումէ կղզիացած մնալով, հոգեպէս տկարանայ, անոր համբերութիւնը սպառի, կամքը քայքայի և ստիպուի դուրսի հետ յարաբերութեան մտնել փորձելով՝ ծուղակն իյնալ: Բայց, բաւական է որ ստիկանութեան այս դիտաւորութիւնը ծանօթ ըլլայ բանտարկեալին: այլևս անիկա կարող պիտի ըլլայ իր կամքն ու համբերութիւնը ղեկավարել, կարող պիտի ըլլայ հեռատես ու շրջանայեաց ըլլալ: Ամէնէն աւելի վտանգուողներն ու փորձութեան ենթակաները անո՞նք եղած են, որոնք անդեկութիւն ունեցած չեն ստիկանութեան գործածած այս միջոցներուն ուղղակի նպատակին, անո՞նք՝ որոնք չափազանց տաքարիւն, միամիտ ու յանդուգն եղած են:

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՐՁՈՒԹԻՒՆ. — Տանջանքներ: Ինչպէս կըսէինք, ստիկանութեան առջև տուած հարցաքննութիւնն է որ պիտի վճռէ Կասկածելիին յանցաւորութիւնը կամ անմեղութիւնը: Ձերբակալուող մը՝ Կասկածելի անունը կը կրէ մինչև այն ատեն, երբ ստիկանութիւնը ուղղակի ապացոյցներ գտած չէ՝ զայն յանցաւոր ճանչնալու: հետեւաբար՝ ստիկանական քննութեան տակ գտնուող մէկը իսկապէս բանտարկեալ մը չէ: այդ բանտարկութիւնը անուանական է միայն: Ստիկանութիւնը պարտաւոր է ազատ արձակել Կասկածելին՝ երբ որոշ փաստեր կը պակսին: Իրաւունք չունի և չի կրնար՝ Դատական Հարցաքննիչին յանձնել զայն:

Հետեւաբար, կառավարութիւնը անլուր տանջանքներ ու աներևակայելի միջոցներ հնարած է՝ Կասկածելիին խոստովանութիւնները խլելու, երբ համոզում գոյացուցած է թէ անիկա յեղափոխական գործերու մասնակից է: Կառավարութիւնը շատ լաւ գիտէ թէ առանց տանջանքներու, առանց բռնադատութեանց՝



անկարելի է որ Յեզաիոխականը գողանիք մը տայ ինքնաբերաբար. անիկա խորապէս ծանօթ է Գազարի բն ըստոյական վեհութեանը և Յեզաիոխութեան հրաշալի զօրութեանը: Յետոյ, անհրաժեշտ են յանցուտը նկատուածին անձնական խոստովանութիւնը կամ նոյնքան զօրաւօր պացոյցներ՝ որպէսզի դատաստանական քննութիւնները իրենց օրինական հանգամանքն առնեն:

Ուստի, «իրելի ընկե՛ք, կեանքիդ և գոյութեանդ գերագոյն բոպէները պէտք է նկատես հիմա, երբ արդէն տանջանքներու ժամը կը հնչէ:

Դիչեր է. կը գտնուիս Գօմիսէրին առջև՝ փոզոցներէն ու աշխարհէն թանձր պատերով բաժնուած խուլ սենեակի մը մէջ. մինակ ես, կորանցուցած անձիգ ազատութիւնը, գուրկ ինքնապաշտպանութեան միջոցներէ, ենթակայ ընձաւորներու առելութեան, անարգանքին ու նախտալից վերաբերութեան:

Գօմիսէրը կը պահանջէ որ խոստովանութիւններ ընես, գիտցածդ ըսես: Իսկ գուն կը մերժես ու անաստան կը մնաս՝

— Բան մը չեմ գիտեր, լուր չունիմ, տեղեակ չեմ:

— Լա՛ւ, հիմա գուն քեզէն կը խօսիս՝ կը պատասխանէ վերջապէս Գօմիսէրը հեզութեամբ, ու գիշակեք թռչունի վայրի նայուածք մը կը խբէ աչքերուդ մէջ. ակոսները սեղմած՝ կը հայտոյէ քու անձիգ բոլոր սրբութիւններուն և կուտայ զպարիկներուն՝ կանխորոշ նշանը . . . փնայածը կարելի է գուշակել արգէն. մարդկային զգացումէ, մարդկային խղճահարութենէ ու սրտի վաւիկութենէ գուրկ այդ զպարիկները — Թաւքիոյ ընկերութեան դիրտը կոչուող այդ քուրդի, լեռնցիի ու իսլամի վայրենաբարոյ խառնուրդը — պէտք է դահիճն ըլլան մարմինիդ:

Հատու ա ձկուն փայտերով դանակոծութիւնը՝ տանու  
ջանքի սովորական եղանակն է՝ Եղած են գծբախտ հայ  
կտրիճներ, որ ութը, տասն օր շարունակ ամէն գիշեր  
ենթաբիւրեւ են բրածեծի, ամէն անգամ կրելով մինչև  
200 ու աւելի հարուածներ, երբ ալ ուշակորոյ՝ նուա-  
զած են, կոյունցնելով ամէն գիտակցութիւն:

Ճշմարիտ փորձառութիւն մըն է թէ՛ ծեծի միջոցին  
ամէնէն աւելի անոնք տուժած են և անոնց չարչա-  
րանքը աւելի բազմապատկուած է, որոնք աղաչած, ար-  
դատած են: Անո՛ր համար որ՝ անղանքը ինքնին տե-  
տակ ժը կամքի տկարացում, անձնատուութեան նշան  
կը համարուի. ուստի, դահիճները կրկնապատկած են  
աննշանքը՝ որպէսզի զո՛ր ստիպուի վճուականութեան  
գալ և փսխել իր գիտցածները:

Խորտա, արհամարհող և կամակոր յեղափոխական-  
ները՝ զինաթափ ըրած են վերջապէս իրենց դահիճ-  
ներուն կատաղութիւնը և յուսահատութեան մատնած  
գանոնք: Բարոյական ուժը՝ յաղթանակած է բիրտ ու-  
ժին, և սահմանուած է միշտ յաղթանակելու՝ բաւական  
է որ Յեղափոխական մը ունենայ հոգիի մեծութիւն:

Եւ ով որ չունի հոգեկան այդ պարտաւորիչ գրամա-  
գլուխը, ով որ չունի անձնուրացութեան, զոհողութեան  
ու զիմադրութեան պատրաստութիւնը՝ լաւ է որ հե-  
ռահայ ազատութեան մարտական շարքերէն, փնտոէ իր  
հանգիստը և խնամէ իր մարմնական փափկութիւնները:

Յեղափոխական զինուոր մը՝ իր գաղափարներով, իր  
բարոյական ըմբռնումներու բարձրութեամբ կոչուած է  
կատարելու ծանր, խի՛ստ դժուար պարտականութիւն  
մը. հետևաբար ո՛չ միայն իր ընկերները, այլ ամէն  
մարդ իրաւունք ունի սպասելու իրմէ բարձրագոյն զո-  
հողութիւն. ալ որ կ'ընկրկի, կը սկզբանայ ու կը դրժէ

իբ ուխտին՝ կը դատապարտուի հասարակաց յարգանքին ու համակրութեան առջև:

Այս բարոյական գերագոյն պարտաւորութեան յարակից՝ կայ նաև զուտ անձնական շահի տեսակէտն ալ: Չէ՞ որ տանջանքը ինքնին տկարութեան խոստովանութիւն մըն է. ոստիկանութիւնը երբ դիմած է այս միջոցին՝ կը նշանակէ թէ անզօր եղած է դատապարտութեան ապացոյցներ գտնելու, անզօր եղած է քեզ յանցաւոր հռչակելու օրինաւորապէս:

Արդ, պէ՞տք է որ ոստիկանութեան տաս այդ ապացոյցները, պէ՞տք է որ դուն քու կամքովդ գիտակցաբար քեզ յանցաւոր հռչակես: Լաւ չէ՞ ակռայ ակռայի վրայ սեղմել, քանի մը շաբաթ կրել մարմնական ամէն պատիժ՝ փոխանակ յայտնութիւններ ընելով դատապարտուիլ տասնեակ տարիներով բանտարկութեան, աքսորի, կեանք մը ամբողջ մաշեցնել, փճացնել չորս պատի մէջ և նոյնիսկ կախաղան բարձրանալ: Դիւցազնական մահէն չէ որ երես պիտի դարձնես, ընկե՛ր, ո՛չ, այլ իբրողութիւնն այն է որ՝ ինչո՞ւ չի փրկես դուն քեզ, ինչո՞ւ չի փրկես օգտակար կեանք մը՝ քանի որ կրնաս, քանի որ միջոցները ու կամքը քու ձեռքդ են:

Քու ձեռքդ են միջոցները, բացարձակապէս, այո՛. որովհետև՝ երբ խոստանութիւն մը չընես, ՊԻՏԻ Ա.ՉԱՏԻՍ, և կամ երբէք ծանր պատիժի պիտի չենթարկուիս:

ԵՐՐՈՐԻ ՓՈՐՁՈՒԹԻԻՆ. — Անխուճարթիւն: Ծեծին չափ նոյնքան ճիւղաղային տանջանք մըն է Անքուստութեան պատիժը՝ որուն կ'ենթարկեն զո՛ր ոստիկանական քրնտութեանց միջոցին:

Արգիլուած է քեզի քնանալ. պսակ անուշով դազան մը՝ ինչպէս կատաղի շունը դժոխքի դռան առջև՝

կը հսկէ խուցիդ մօտերը, կը դիտէ շարժումներդ և երբ նշմարէ որ քունը կ'ընկճէ մարմինդ ու աչքերդ կը գոցուին, հրացանի բունով կը հարուածէ քեզ ու չի թողուր որ քնանաս: Առաջին երեք օրերը գուցէ այնքան դժուար չեն, բայց յետոյ չարհարանքը անտանելի կը դառնայ. ահա այս միջոցին է որ ոստիկանութիւնը պիտի ուղէ օգտուիլ քու յոգնածութենէդ և ջղազրգոտութենէդ:

Ընկեր մը ութ օր շարունակ ենթարկուեցաւ քնատուութեան, երբէք թարթիչները վրայ վրայի չի կրցաւ բերել, բայց պահեց իր անապարտելի հաստատակամութիւնը և կեղծեց զառանցանքներու մէջ խաբել հարցաքննիչները, խօսելով յերյիւրուած ու անկապ պատմութիւններ, յեղափոխական խնդիրէ շատ հեռու եղելութիւններ ու անցքեր: Եւ ոստիկանութիւնը՝ մոլորեցաւ ու խաբուեցաւ:

Քնատութիւնը կը թուլցնէ ջիղերդ, կը պղտորէ երևակայութիւնդ, կազգէ դատողութեանդ վրայ, բայց, չի կրնար ջլատել կամքդ՝ եթէ զօրաւոր է անիկա: Այս տանջանքին ենթարկուած ընկերներու պատմութիւնները գրաւական են մեր ըսածին: Բոլոր այն Յեղափոխականները որ անվախ եղած են, որ կանխապէս անդառնալի որոշումը տուած են ամէն գնով ո՛չ մէկ խոստովանութիւն ընելու՝ Անքունութեան տանջանքը չէ կրցած տկարացնել իրենց կամքը: Վերջապէս դահիճները տեղի տուած են ու զո՛ր փրկուած է:

Անքունութեան չարհարանքէն անցած ընկեր մը՝ կըսէք օր մը.

« — Կատաղութիւն կը զգայի ու երթալով արհա-մարհանքս կը կրկնապատկուէք երբ կը տեսնէի թէ այդ ապուշ ու վայրենի մարդիկը իրենց կոպտութեամբը,

իրենց հակամարդկային ու բիրտ միջոցներովը մրցումի կլած էին իմ բարոյական գիտակցութիւնս և ուժս ընկճելու. բարկութիւնս մը, անբացատրելի զայրոյթ մը կը զգայի՝ տեսնելով այդ գոմէսէքի, փօլիսի ու զապթիէյի փառչաները որ իրենց խելքով զիս խոստովանութեան պիտի մղէին, գաղտնիքներս պիտի խլէին: Հետևաբար՝ անոնք որքան որ տանջանքի վիճակս երկարել կուտային, որքան որ անսիրտ կը դառնային՝ այնքան զիս մաղբուրթեանս ոգին կ'ուժեղանար, կ'ամրանար մէջս, այնքան չընկճուելու, անսասան մնալու արամաղբուրթիւնս կ'աճէր կը խորունկնար ներսս: Արժանապատուութեանս չէի ձգեր՝ պզտիկնալ, կքիլ ու նուաստանալ անոնց առջև. այսպէս, ամէնէն վերջը իրենք յաղթահարուեցան ու յուսահատեցան. կա՛րքս զօրս որ էր է՛ն, քիչ մը ատեն նեղուեցայ, կրեցի այդ չարչարանքները, սակայն խոստովանութիւնս ըրած չըլլալով՝ երկար տարիներու բանտարկութենէն սզատեցայ . . . »

Եծիին ու Անքունութեան չափ դժուար չեն ապահովարար միւս փորձութիւնները՝ որոնք աւելի սովորական ու յաճախադէպ են: Այդ կարգի տանջանքներն են՝ շարաթներով ու ափսներով զնտանի մէջ արգելափակումը, ուր կնիթական զրկումս է լոյսէ, հանգիստ նստելէ կամ պառկելէ, քանի որ ճնշումս ու խոնաւ օդ մը, թաց գետին մը անկարելի կը դարձնեն մարմնական ո՛ր և է հանգստաւէտութիւն. ինչպէս նաև՝ ձմեռ ատեն պաղ ջուրի մէջ թողլով նեղելը, կտոր մը ցամաք հացով կէս անօթի վիճակի մէջ պահելը, ևն. ևն. որոնց պժգալի շարքը կարող է տակաւին բաւական երկարելու ամէնքն ալ այն նպատակով ստեղծուած՝ որպէսզի ենթական յուսահատի, ուժասպառի և խոստովանութիւնս ներու զիջի:

ԶՈՐՐՈՐԿ ՓՈՌՁՈՒԹԻՒՆ. — Քաղցրութիւն եւ սուս խոստումներ: Չարչարանքներու եւ մարմնական խոշտանգումներու չափ եւ թերեւ աւելի նենդաւոր, աւելի դաւադրական են այն անուշ լեղու խօսքերը, խոստումները եւ երդումները՝ որ ոստիկանական այս կամ այն պաշտօնեան, նոյնիսկ կառավարական բարձրաստիճան անձեր գուցէ շայլեն քեզի, սիրելի ընկե՛ր:

Տանջանքներէն առաջ ու թերեւ տանջանքներէն անմիջապէս ետքը՝ կը տեսնես յանկարծ որ խոժոռ, դահճային դէմքով Հարցաքննիչիդ կատաղութիւնը, դաժանութիւնը կը հայլի ու մարդը գառնուկի երևոյթ մը կ'առնէ. գլխալ կը սկսի վրադ, կարեկցութիւն ցոյց կուտայ. ու անասելի՛ շնականութիւն, մինչև անգամ առաջ կերթայ հաւտացնելու թէ ինք վստահ է քու անմեղութեանդ, միայն իր նպատակն է քու միջոցով բուն յանցաւորները ճանչնալ. կը խօսի, կը համոզէ, մանաւանդ երդումներ կ'ընէ՝ իր Նիփեսանիւն, Ղուրանիւն, մօրը, իր բոլոր սրբութիւններուն, փատիչանին գլխուն վրայ:

— Յայտնէ մեզի բուն յանցաւորները, յայտնէ այսինչ եղելութիւնը ու պիտի ազտուիս, կը կրկնէ . . .

Մարդկային ո՛չ մէկ սեւերեսութիւն, ո՛չ մէկ բարու յազուրկ աղաոտութիւն, ո՛չ մէկ պիղծ ստորնութիւն չի կրնար հաւասարիլ թուրք պաշտօնեային խարդաւանքին ու խաբէական փորձերուն: Գօմիսէրը կամ Հարցաքննիչը չի վարանիր բնաւ ամէնէն անհաւատալի երդումը ընելու հազար անգամ ու ապշեցուցիչ համոզականութեամբ, զիտնալով թէ միեւնոյն ատեն սուտ է որ կը խօսի, սուտ երդում է որ կ'ընէ: Որովհետև, հա՞րկ է ըսել, բոլոր այդ խօսքերը գարշելի ՍՈՒՏԵՐ են:

Այսպէս, բազմաթիւ անփորձ հայ երիտասարդներ, բազմաթիւ դիւրախաբ Յեղափոխականներ՝ հաւտալով թրքական այս կարգի սուտ երդումներուն՝ բռնուեցան ցանցին մէջ ու դատապարտուեցան:

Գու մասիդ, քու գործերուդ վերաբերեալ յայտնութիւնները գուցէ այնքան ծանարակչիւ, այնքան աղետալի չեն քեզի համար՝ որքան երբ ուրիշի մը նկատմամբ խոստովանութիւններ կ'ընես: Հարցաքննիչը տեսնելով որ այլևս քու վրայ ծանրանալիք չօչափելի ու վճռական փաստ չի կայ, կը դիմէ խաբէական ու դաւադրական միջոցի մը:

Ուրիշներու մասին ֆեզմէ վկայութիւններ կ'առնէ:

Վա՛յ եթէ միատուութիւնն ունեցար թերի կամ ամբողջ, աւելի կամ պակաս բաներ թող տալու չթունջնէդ՝ աս ու այն անձին նկատմամբ: Գու բերնովդ իսկ արդէն դատապարտութեանդ վճիռը տուած ես՝ լսել է:

Ո՛չ, ամօթ է ականջ տալ, ամօթ է մազի չափ հաւատք ընծայել՝ ոստիկանական ու դատական պաշտօնէութեանց խոստումին ու երդումին: Այդ քաղցրանուշ խօսքերը, այդ հաւաստիքները, այդ փաղաքշանքները՝ չաքարխառն թոյներ են, ընկե՛ր, որ յուզայական բաժակով քեզի խմցնել կուզեն, օգտուելով միատուութենէդ ու տգիստութենէդ:

Ինչպէս որ բոլոր զօրութեանքդ ու բոլոր կանցողութեանքդ կուուեցար չարչարանքներուն առթած ցաւին դէմ, ինչպէս որ արի ու անընկճելի միացիք տանջանքներուն մէջ, անհրաժեշտ է որ նոյնքան ուշադիր, չրջահայեաց ու անդրդուելի մնաս շողօքութութիւններուն, կեղծաւորութեանց, երդումներուն ու հրապուրանքներուն դէմ: Որովհետեւ, միշտ կը կրկնենք, փոր-

ձութիւններուն ամէնէն վտանգաւորը, ամէնէն կործանարարն են առոնք:

Շատ մը յեղափոխական զինուորներ՝ բազմաթիւ տեսակ նեղութիւններու, խոշտանդումներու դիմադրելէ և հաստատակամ մնալէ ետք, երբ արդէն յանցանք մը չէր կրցած հաստատուիլ վրանին ու ազատ պիտի արձակուէին, յանկարծ խաբուելով կեղծ խոստումներէն ու երդումներէն՝ թեթև խռատվանութիւններ ըրին և այսպէսով դատապարտուեցան:

Ըսինք արդէն թէ դատական պաշտօնեաները՝ եղեռնական փորձառութիւններով՝ կրցած են լաւ սերտել զոհերու հոգեբանական տրամադրութիւնները:

Նախ մարմնական երկարատե տանջանքներով կը ջանան ձերբակալուողին հոգեկան կենսական ուժերը խլել և զայն յուսահատութեան, ամէնադառն յուստեսութեան մղել. ետքէն կեղծիքը ձեռք կ'առնեն իբրև զէնք ու խեղճ բանտարկեալին կը շոյալին խոստումներ, ազատ ձգելու յոյսեր: Կը կերցնեն համադամներ, կը հրահրեն ընտիր սիկնիթներ, կուտան հոյնիսկ դրամական կաշառքներ, մինչև որ անգամ մը զոհը միամտութիւնն ու, այո՛, վատութիւնն ունենայ գաղտնիքները յայտնելու: Անկէ՞ ետք . . . կը տեսնես որ յանկարծ այդ սիկնիթները, համադամները մէկ անգամէն կը դադրին. խոստումները, երդումները ու անուշ լիզուները երազի պէս կը ցնդին, դէմքերը կը դառնան դժնեայ, նայուածքները արամարական ու թունաւոր, և բանտին դուռը կը բացուի առջևդ վերջնականապէս:

Կը զգաս թէ խաբուերես և չարաչար կերպով, բայց զղջումը ո՛ւշ է. պէտք է որ տարիներով քաւես այլևս մեղանջումդ:



## Վկայիւն դէմ

Ընկե՛ր, նախնական հարցաքննութեան ասել կամ ոտտիկանատան մէջ գանուած միջոցիդ, նկատողութեան արժանի և կարևոր պարագաներէն մէկն ալ վկան է:

Վկան կրնայ շփոթեցնել քեզ՝ երբ անակնկալ կերպով հարցաքննութեանդ պահուն մէջտեղ կուգայ, կը կենայ դէմդ ու երես երեսի կը յայտնէ իրողութիւններ՝ որոնք գուցէ ճիշտ են, որոնց մասնակից եղած կամ անդեակ գտնուած ես:

Վկային երևումը իրացնէ շփոթեցուցիչ և ջրատոզ է. բնականաբար առաջին տպաւորութիւնդ կըլլայ՝ լքում, յուսահատութիւն և անկարողութիւն; ուստի կը կարծես թէ ա՛լ փախուստի ճախայ չունիս, բանդ բուսած է: Չէ՞ որ մարդը առջևդ կեցած բոլոր եղած չեղածքածը մէջտեղ կը հանէ, գաղտնիքներդ կը մատնէ, քու ուրացումներդ կը ջրէ: Հետևաբար, կ'ընկճիս, կը յաղթանարուիս ու կը մտադրես խօսիլ ամէն բան:

Բայց չէ. այդ բոլոր ենթադրութիւններդ, բոլոր յուսահատութիւնդ ու լքումդ անիրտ ու աւելորդ են:

Վկան՝ կարծածիդ չափ արժէք չունի, ոչ ալ անոր յայտնած աս ու ան կարևոր կամ անկարևոր վկայութիւնը:

Վկան չի կրնար քեզի մետակ, բաւական է որ հասաատ մնաս քու հերքումներուդ և անսասան՝ ՈՒՐԱՅՈՒՄԻ մէջ:

Եթէ արողջ աշխարհ իսկ աննպաստ վկայութեան դայ ամբաստանեալին դէմ, անոր պարտաւորութիւնն է ժխտել ամէն վկայութիւն և ուրանալ, որովհետև վերջապէս կարելի է դիւրութիւն գտնել ամէնէն գորաւոր

վկային խոյ յայտնութիւնները բեկանելու, ջրելու, սակայն արատանեալին խոստովանութիւնները կը մնան անբեկանելի և որոշ փաստ:

Բայց, նախ վկաները դասաւորութեան մը ենթարկենք: Անոնք կարող ենք երկու տեսակի վերածել:

ա.) Հեռաւոր վկաներ:

բ.) Ուղղակի վկաներ:

Հեռաւոր վկաները անոնք են՝ որ քու գործերուդ, քու գողտնիքնիքուդ, քու անձիդ հետ սերտ կապ մը չունին, բայց այլևայլ հանգամանքներով իրազեկ կամ ականատես եղած են կաթմ մը պարագաներու և կուգան հիմա վկայել քեզի դէմ:

Ուղղակի վկաները անոնք են՝ որ գործակից են եղած քեզի, տեղեակ շատ մը գործերու, ծանօթ այլևայլ գաղտնիքներու, է՛հ, այո՛ ամսո՛ս, նոյնիսկ ընկերներ միեւնոյն նուիրական նպատակին:

Բնականաբար, կարելի է ինքնին խորիւրթէ աւելի հեշտ է Հեռաւոր վկան հերքելը՝ քան ուղղակի վկան որովհետեւ, ինչ ալ ըլլայ, առաջինը չի կրնար այնքան ազդու և մտաւոր վկայութիւններ, ասպցոյցներ տալ՝ քան երկրորդը:

Ուղղակի վկան է որ քեզ կը շփոթեցնէ, վարանումի և գիտար դրութեան կը մասնէ:

Բայց, ո՛վ որ ալ ըլլայ քեզի դէմ, քու դատապարտութեանդ համար խօսողը՝ պէտք է որ անոր անձին կարեորութիւնը նկատողութեան առնես. քու միակ ու գերագոյն ջանքդ պէտք է ըլլայ՝ մերժել անոր ըսածները, երբէք չի հաստատել զանոնք և անխախտ մնալով քու նախկին ուրացումներուդ վրայ՝ պարագաներ գտնել — աւ նոյնիսկ ստեղծել — հերքելու եղած վկայութիւնը:

Վկայութիւն մը կարելի է հերքել՝ հակառութիւններ գտնելով անոր մէջ՝ տեղի, ժամանակի կամ ուրիշ պարագաներու տեսակէտով, որովհետեւ դատաստանական քննութեանց մէջ՝ տեղը, ժամանակը և պարագաները մեծ նշանակութիւն ունին: Օրինակի համար՝ վկան կը կը յայտնէ որ այսինչ օրը, այսինչ ժամուն՝ քեզ այսինչ մարդուն հետ կամ այսինչ ճեղք տեսած է. նոյն խնդիրին համար կանչուած երկրորդ վկայ մը՝ կը տեսնես որ նոյն օրուան, ժամուն, մարդուն կամ տեղին նկատմամբ չփոթութիւններ կ'ընէ և կէտ առ կէտ չի կրնար հաստատել առջինին ըսածները: Դուն ասոնցմէ օգտուելով՝ ցոյց կուտաս այդ չփոթութիւնը իբրև հակառութիւն և կը պնդես որ վկաները սուտ կը խօսին: Սակայն, ահէն պարագայի տակ, անհրաժեշտ է որ նախ վկային բուն իսկ անձին դէմ առարկութիւններ գտնես, որովհետեւ անոր անձը մեծ դեր կը խաղայ վկայութեան պահուն:

Տեսականապէս անկարելի է մանրամասնօրէն հին ըսել թէ՛ ի՞նչ առարկութիւններ կարող ես գտնել վկայի մը անձին դէմ, զանի որ նոյնինքն իբրականութիւնն է միայն որ պիտի տայ անհրաժեշտ փաստերը: Էականը այն է որ վկային անձը կասկածի տակ ձգես, այսինքն ցոյց տաս թէ անիկա դիտումնաւոր նպատակով, թշնամական արատադրութեամբ եկած է քեզի դէմ վկայելու: Շատ մը շարաքական յանցաւորներ՝ երբ նման պարագաներու տակ նեղը մնացած են՝ անմիջապէս, առանց վարանելու՝ յայտարարած են թէ այսինչ վկան թշնամական անցեալ մը ունեցած է իրենց հետ, ուստի զրիժառութեան, ռիսակալութեան դրդումներով եկած է վկայութիւն տալու: Միակ միջոցն է ասիկա՝ վկան թշնամի ցոյց տալ քեզի, հոգ չէ թէ անիկա

բարեկամ կամ ազգական ըլլայ, հոգ չէ թէ անոր հետ երբէք խնդիր մը ունեցած չըլլաս կեանքիդ մէջ, հոգ չէ նոյնիսկ՝ եթէ երբէք ճանչցած ալ չըլլաս զայն: Կարևորը ա՛ն է որ յայտարարես թէ անիկա թշնամի մըն է քեզի: Ես, քէն, երբ դատաստանական ատեանին առջև այդ թշնամի օրինակ հաստատելու ժամանակը գայ՝ մինչև այն ատեն միջոց մը գտած կըլլաս:

Եւ արդէն դատավարական ատեանի առջև կանչուած վկաներու մասին՝ իր տեղը պիտի խօսինք կարևորը:

ՀԻՆԴԵՐՐՈՐԴ ՓՈՐՁՈՒԹԻՒՆ.— Ընկերո՛ղ դիմե՛ք Ձեր բարակութեան մը պահուն Յեղափոխականին դիրքը աւելի փափուկ ու դժուար է, երբ մինակ չէ և իր հետ ուրիշ գործակից ընկերներ ալ միաժամանակ ենթարկուած են հարցաքննութեան ու տանջանքներու:

Դժուար ու փափուկ է՝ անոր համար, սիրելի՛ ընկեր, որ դուն մինչև վերջը հաստատ կը մնաս քու ուրացումներուդ վրայ, կը հերքես ամէն ամբաստանութիւն, կուրծք կուտաս բոլոր բռնադատութեանց, բոլոր նեղութիւններուն, ոչ մէկ յայտնութիւն, ո՛չ մէկ խոստովանութիւն կ'ընես՝ բայց ահա ընկերդ անդին կը տրկարանայ, կը լքի և կը սկսի ծայրը դնել յայտնութիւններուն: Ենթադրենք թէ ընկերդ ալ անսասան մնայ, բայց չէ՞ որ դուն տեղեակ չես անոր տուած հարցաքննութիւններուն. ոստիկանութիւնը կամ հարցաքննիչներդ դիւրութեամբ կրնան քեզ մոլորեցնել ու խաբել, այնպէս կեղծելով քեզի թէ ընկերդ ամէն գաղտնիք խլած են:

Անհրաժեշտօրէն պէտք է ընդունիս թէ՛ ընկերոջդ խոստովանութիւնները օրինական տեսակէտով չուքի մը չափ անգամ չեն կրնար քու անձիդ վնաս մը բերել՝ եթէ դուն խաբուելով չի հաստատես անոր ըսածները և

չի սիրիտ խոստովանութիւններու: Ընկերդ թող խօսի  
ամէն խնդիրի վրայ, թող յայտնէ առ ու ան իրողու-  
թիւնները, թող քեզ դոքծակից, մասնակից ցոյց տայ  
իբե՛ն ու իր յանցանքներուն, ասոնք ամէնքն ալ մի-  
այն ու միմիայն ի՛րն յետակու բնոյթը ունին, ո՛չ  
թէ քեզի: Թքջտեան Օրինադրքին սրբաժողովութիւնը  
բացայայտ է այս մասին:

« Ի իւնոյն յանցանքով ամբաստանուած անձներ՝  
իրարու նկատմամբ վկայ չեն կրնար ըլլալ: »

Երբ մէկը կը գոնուի ամբաստանութեան մը տակ,  
բնական է որ իր յանցանքը թիթեցնելու կողմ օրէն-  
քին որանաղբած պատիժէն ինքզինքը ազատնու հա-  
մար՝ իր յանցանքը ուրիշ մը վրայ ձգէ, որուն թուք-  
քերէն օրինական լեզուն աղփը նիւ՛րմ անունը կուտայ:

Հետեւաբար, միւնոյն յանցանքով ամբաստանուած  
ընկերոջ մը վկայութիւնը երբ սկզբունքով օրինական  
ուժ մը չունենար, ա՛լ հարկ չիկայ խռովիլ անոր յայտ-  
նութիւններէն ու պաղարիւնութիւնը կոյննոյնի:

Ոստիկանութիւնը՝ օգտուելով օրէնքի մասին քու-  
տղիտութենէդ, մանաւանդ ուղելով քեզ յանկարծակիի  
բերել՝ դիտմամբ խոստովանող ընկերը դէմդ կը բերէ և  
կրկնել տալ կուտայ աս ու ան իրողութեանց յայտնու-  
թիւնը. իրողութիւններ՝ որոնց ճշմարտութեանը վրայ  
կուսկած չունիս, քանի որ քու գիտցած բաներդ են:  
Ոստիկանութեան նպատակն է քեզ յանկարծակիի բե-  
րել, քեզ զինատափ ընել ու օրոմտութիւնդ, զայրոյթդ  
զրգուել՝ ընկերոջդ դէմ, օրպէսզի միամտութիւնն ու-  
նենաս ըսելու՝

— Ո՛չ, էֆէնտի՛մ, ատոնք ի՛նք ըրաւ, ի՛նք էր որ  
այսինչ գործը կատարեց, այսինչ խնդիրին մասնակցե-  
ցաւ, ևն. ևն. :

Առանք ինք որաւ, այսինչ գործը ինք իրաստեց և այսինչ ինքդիրին մասնակցեցաւ խօսքերը արդէն խոստովանութեանն եւն. բռնուած ես. այլևս խեղձկան յանցաւոր մըն ես, քանի որ այդ եղելութեանց դուն ալ տեղեակ ես:

Ընդհանրապէս կը, դուն պահելով քու անայրայլ պարզութիւնութիւնդ և հաստատակամութիւնդ՝ պէտք էր լռէիր ընկերացի երեսն իւրեր:

— Կը գաբմանա՛մ, քանի կը խօսի՝ որոնց . մասին լուր հունիմ, որոնց երբէք տեղեակ չեմ, կը մնրծեմ այս զրոգարտութիւնները՝ բոլոր ուժովս . . .

Անկէ ետք անմիջապէս կը մնար քեզի կա՛մ թշնամական պարագաներ հնարելով՝ ընկերացի վարմունքը դիտարկելու ցոյց տալ, կամ պարզապէս լռել որ անիկա մտքին հաստատակարարութեանը կորսնցուցած է ու իր այս ընթացքը անբացատրելի կը մնայ քեզի համար:

Միևնայն յանցանքով ամբաստանուած երկու անձերէն մէկը կընայ խոստովանութիւններ ընել ընկերացի նկատմամբ, ինքզինք անմեղ ցոյց տալու համար Բաւական է որ միւս ընկերը չի հաստատէ իր կողմէն՝ անոր լռածները. միշտ յայտնութիւններ ընողն է որ կը գատապարտուի Օրինակ. ենթացքէ որ ձերբակալուած ես գործակից ընկերոջ մը հետ. երկուքդ ալ կը գանուիք հարցաքննութեան տակ. դուն կը պահես հաստատակամ լուրութիւն, մինչ ընկերք կը սկսի քու մասիդ յայտնութիւններու, ինքզինք բոլորովին անանդ ցոյց տալով. իր մասին բան մը չի խօսիր, իր յանցաւորութեանը համար բան մը յայտնած չէ: Եթէ դուն մնրծես անոր խոստովանութիւնները և չի հաստատես զանոնք, դուն ազատ պիտի արձակուիս, իսկ ընկերք պիտի գատապարտուի, հակառակ անոր որ իր

մասին բան մը խոստովանած է՛ր ինք: Օրէնքը նկատու-  
ղութեան կ'առնէ այն պարագան թէ՛ ինք տեղեակ ըլ-  
լալով գործուած յանցանքին և ատենին լուր տուած  
չըլլալով իշխանութեան, ըսել է թէ մասնակցութիւն մը  
կամ մեղսակցութիւն մը ունեցած է նոյն յանցանքին.  
և ասիկա բաւական է յանցաւոր հռչակելու զայն:

ՎԵՑԵՐՈՐԴ ՓՈՐՉՈՒԹԻՒՆ. — Խարհուքիւն: Ոստի-  
կանական հարցաքննութեանց մէջ խարէութիւնը ու  
խարդախանքը սովորական դաւ մըն է՝ որ կը լարուի  
շատ անգամ քաղաքական յանցաւորին կամ Յեղափո-  
խութեան զինուորին դէմ: Եւ այս դաւը այն ատեն  
մանաւանդ շատ յաջող արդիւնք կուտայ՝ երբ ձեռքա-  
կալուած ընկերները մէկէ աւելի են:

Երևակայէ, ընկե՛ր, որ քանի մը հոգիով ձեռքա-  
կալուած էք՝ ա՛յն տեսակ գործերու կասկածանքով,  
որոնց գաղտնիքը ձեզմէ զատ ոչ ոք գիտէ. երևակայէ  
թէ դուքը դեռ ազատ մնացած ընկերներ ունիք՝ որոնց  
մասին ոստիկանութիւնը լուր հունի և դժուար թէ  
կասկածի անոնց վրայ, եթէ ձեր մէջէն յայանութիւն-  
ներ չըլլան:

Արդ, դուն չորս պատի մէջ ես, ամէն յարաբերու-  
թենէ զրկուած, և անտեղեակ թէ ի՛նչ կանցնի կը  
դառնայ դուքը, ի՛նչ հարցաքննութիւն կուտան ջեզի  
հետ ձեռքակալուած ընկերներդ, ևն. ևն. : Օր մըն ալ  
երբ հարցաքննութեան կը ներկայանաս՝ կը տեսնես  
յանկարծ թէ հարցաքննիչդ ա՛յն տեսակ անուաններ  
կուտայ, այն տեսակ իրողութիւններու մասին ակնար-  
կութիւններ կընէ, որոնք միայն դուն և գործին տեղ-  
եակ ընկերներդ գիտէիք: Յանկարծակիի կուգաս, կը  
խոտլիս, կը չփոթիս: Ըսել է ամէն բան մատնուած է,  
ամէն գաղտնիք երևան ելած՝ կը մտաբերես: Հարցա-

քննիչը արդէն կը հետևի դէմքիդ փոփոխութեան, կը լրտեսէ հոգեբանական վիճակդ և օգտուելով այլայլումէդ՝ կը խնդայ չարաչուք ծիծաղով:

— Մենք ամէն բան գիտենք, օղլո՛ւմ, մենք ամէն բան հասկցած ենք, ծածկելդ արժէք չունի: այսինչ բանը այսպէս չեղա՞ւ, կը հարցնէ հարցաքննիչը՝ իբր թէ հաստատելու համար իր ըսածներուն ճշմարտութիւնը, բայց նպատակ ունենալով նաև որ անգամ մը «այո» ըսես կամ «ո՛չ, այդպէս չեղաւ, այլ այսպէս»:

Ո՛չ, ընկեր, դիւրախար ու միամիտ ըլլալու չես՝ երևոյթներէ, մէկ քանի նշաններէ, անուններէ հետևեցնելու թէ զործը մատնուած է ամբողջովին՝ կամ ամէն գաղտնիք պարզուած. ո՛չ, վտանգաւոր է պաղարիւնութիւն կորսնցնել ու դահիճին անձնատուր ըլլալ: Յայտնի խաբէութեան մը զո՞ն է որ կ'երթաս:

Ոստիկանութիւնը կրնայ ասկէ անկէ հատուկտոր տեղեկութիւններ առնել, անուններ, պարագաներ իմանալ՝ առանց իրողութեանց ամբողջովին հասու ըլլալու, առանց իսկական գաղտնիքներուն վրայ լիակատար ու ճշմարիտ տեղեկութիւններ ունենալու: Եւ քեզի անուններ տալով, մասնաւոր պարագաներու և դէպքերու յիշատակութիւնն ընելով՝ ուրիշ նպատակ չունի, այլ միայն այն որ քեզմէ ստուգէ, քեզմէ իմանայ կատարեալ իրողութիւնը:

Փորձութիւններուն ամէնէն վտանգաւորն է այս կեղծիքը: Հարիւրներով կը համբուին այն ընկերները՝ որ այսօր բանտին մէջ կը հեծեն գլխիկոր, չղթայակապ և դառնացած հոգիով՝ ոստիկանական այս խարդախանքին զո՞ն գացած ըլլալնուն համար: Եւ երբ ընկեր մը մէկ անգամ գայթեւով թակարդին մէջ կը բռնուի, արդէն սև աղէտի դուռ կը բանայ ո՛չ միայն իրեն, այլ



իր հետ ձերբակալուած բոլոր ընկերներուն համար  
կծիկին ծայրն է որ կուտայ ոստիկանութեան ձեռքը:  
Քանի մը տեղեկութիւններ ինք տալով, մէկ երկու  
յայտնութիւն ինք ընելով՝ բացարձակապէս պատճառ  
կը դառնայ որ մնացածներն ալ իր ընկերները խօսելով  
լրացնեն. որովհետեւ ոստիկանութիւնը՝ իր ամէն մէկ  
լսածը իբրև հատու զէնք կը գործածէ, որսալու այն  
յիզակոխական գաղտնիքները՝ որոնց տեղեկանալու  
համար ո՛չ մէկ զոհողութեան առջև կ'ընկրկի:

ԵՕԹՆԿՐՈՐԴ ՓՈՐՁՈՒԹԻՒՆ. — Լրջես քան ա՛յլեւայ-  
նեւ: Հարցաքննութեան տակ գտնուած միջոցիչ ար-  
թուն զգուշութեան պէտք ունիս՝ չի խաբուելու համար  
քոնս քանսարկեայնեւի:

Բանտին մէջ, սիրելի՛ ընկեր, հոգեկան պահանջ մըն  
է ամէն բանտարկեալի՝ մօտենալ բախտակից մարդոց,  
խօսիլ անոնց հետ, մտերմանալ, հոգ չէ թէ ի՛նչ աղգէ  
ալ ըլլան անոնք, թուրք, քուրդ, չէրքէզ կամ հայ,  
Վիճակի նեանութիւնը և տաւապանքի նոյնութիւնը  
կը քանդէ ցեղային ու ազգային խտրութեան ամէն  
պատնէշ, ամէն ամբարտալ ու բանտակից անձերը կը  
մօտեցնէ իրարու, կ'եղբայրացնէ զանոնք տեսակ մը  
անբացատրելի, անմեկնելի զգացումով: Բանտը առան-  
ձին աշխարհ մըն է, ուր մարդիկ կ'սպրին սովորական  
կեանքէն, կեանքի սովորական ըմբռնումներէն բոլոր-  
ովին տարբեր պայմաններով: Իւրաքանչիւր բանտար-  
կեալ ախամայ ներքին հասակրութիւն մը, կարեկցու-  
թիւն մը կը զգայ իրեն հետ նոյն պարիսպներուն մէջ  
փակուած ընկերոջ նկատմամբ և ընտանի զգացում մը  
կը գրդէ զինքը՝ բողձալու անոր ազատութիւնը: Ասոր  
համար գրէթէ սովորութիւն մը դարձած է որ բան-  
տարկեալները հետաքրքրուին փոխադարձաբար իրենց

բանտարկութեան պատճառներով, խորհուրդներ տան իրարու և թելադրութիւններ ընեն. մանաւանդ նորեկ մը՝ միշտ աւելի հետաքրքրութեան առարկայ կը դառնայ: Եւ իրաւցնէ՛ յաճախ այլևայլ մութ գաղտնիքներ որոնց զատարանը ու դատաւորները չեն կրցած տեղեկանալ՝ բանտին բնակիչները դիտեն ամէնայնաւոր մանրամասնութեամբ, և այս ամէն պատճառով որ բանտարկեալ մը միշտ վստահութիւն ունի իրեն վիճակակիցներուն վրայ և կը սիրէ անոնց յայտնել՝ ուրիշին յայտնել չուզածը: Հետեւաբար, ոստիկանութիւնը կը փորձէ շատ հեղ կամ ուղղակի բանտարկեալ մը իբրև լրտես գործածել, և կամ լրտեսի մը բանտարկեալի երևոյթ տալով՝ իհասկ իր ուզածները:

Կը տեսնես որ բանտարկեալ մը կայ քու սենեակիդ մէջ, երևութապէս անիրաւուած, թշուառ ու դժգոհ: Ոստիկաններն ու բանտապահները գէշ կը վարուին հետը, կը նեղեն, կը հայհոյեն անոր, կը զարնեն կը ձգեն, ինչ որ քեզի ենթադրել կուտայ թէ իրաւցնէ անիկա ալ քեզի նման տանջուող մըն է բռնութեան խուցերուն մէջ: Կ'արդահաստիս վրան, կարեկցութեան զգացումը կը մղէ քեզ որ մօտենաս իրեն, կամ, ինք արդէն կուզայ քովդ, կը պատմէ իրեն եղած անիրաւութիւնները, կը քննադատէ կառավարութիւնը, յուզիչ խօսքեր կը գտնէ իր անձը աւելի վստահելի ցոյց տալու համար քեզի. և կ'մաց կամաց կը սկսի հետաքրքրուիլ քու կեանքովդ, քու բանտարկութեանդ դրդապատճառներովդ: Վերջապէս, կը խաղայ այն տեսակ վարպետ դեր մը, որ երբէք կասկած չի կրնար արթնցնել մէջդ թէ՛ ինքը լրտես մը կամ ոստիկանութեան մէկ գործակալն է: Բաւական է որ միամտութիւնն ունենաս մօտէն կամ հեռուէն շօշափելի փաստեր տալ քու

յանցաւորութեանդ ու գաղտնիքներուդ մասին. վստահ եղիր թէ նոյն օրը անմիջապէս արդէն քու բոլոր խօսքերդ ոստիկանութեան հասած են: Պէտք է հաւատաս թէ յաճախ այդ բանտարկեալ լրտեսը՝ կրնայ նոյնիսկ դատական մէկ կարևոր պաշտօնեան ըլլալ, որ կարող է խօսակցութեան մը ձևին տակ՝ անզգալաբար քեզ ճշմարիտ հարցազննութեան մը ենթարկել, և, օգտուելով քու անփոյթ տրամադրութենէդ՝ գողնալ քեզի՛ն խոստը վանութիւններ:

Ուստի, այնքան պարզ է տեսնել թէ յեղափոխութեան զինուորի մը համար գաղտնապահութիւնը ի՞նչ էական, բացարձակ պայման կը կազմէ, քանի որ նոյնիսկ ոստիկանական խստութիւններէն, դատաստանակսն բռնադատիչ ու դժուար հորցազննութիւններէն դուրս ալ էնթրիկներ, դաւեր կան անոր ոտքին առջև, որոնց մէջ կրնայ բռնուիլ՝ վտանգելով թէ՛ ինքզինքը, թէ՛ այն գործը՝ որուն նուիրուած է:

Կոյր անձնուիրութիւնը, անհաշիւ նուիրումը բաւական չեն օգտակար ըլլալու Հայրենիքին: Ամէն մէկ յեղափոխական՝ զինուոր մըն է, արդէն թշնամի բռնակի մը դէմ կուրի բռնուած, հետևաբար պէտք է որ ստոյգ ու ճշմարիտ ծանօթութիւնն ունենայ իր հակասակորդին ուժին, տակտիկին, հնարքներուն և զէնքերուն: Յեղափոխութիւնը մինչև հիւս շատ բան չահած և հաճմատաբար քիչ կորուստ ունեցած պիտի ըլլար՝ եթէ մեր յեղափոխական այնքան անձնագոհ ընկերներէն շատերը զիտնային թրքական դատարաններուն և ոստիկանական, դատաստանական նենգութեանց ու օրէնքներուն կարևորները:

Ահա, ընկե՛ր, ամիտի կերպով հաւաքածոն այն անցքերուն ու փորձութիւններուն՝ որոնք կը կազմեն

Նախնական հարցաֆննութեան լրացուցիչ պարազանները ինչպէս ըսինք, աւելորդ չենք նկատեր անգամ մըն ալ կրկնելու թէ՛ ոստիկանական հարցաքննութիւնը հիմն է ամբողջ դատաստանական ընթացքին. այն որ կրցած է իր անձը չի վտանգել նախնական քննութեանց միջոցին, այն որ կրցած է ամէն գնով ու ամէն զոհողութեամբ՝ փաստեր չի տալ ոստիկանութեան ձեռքը, անիկա արդէն վստահ կրնայ ըլլալ թէ իր բանտարկութիւնը ժամանակաւոր հանգամանք ունի միայն և իր ազատումը կասկածի ենթակայ չէ:

Իսկ, ընդհակառակը, այն ընկերը որ դժբախտութիւնն ունեցած է այս կամ այն կերպով կասկածանքի, փաստերու, ապացոյցներու տեղի տալ՝ ոստիկանութեան կողմէ կը յանձնուի Մուսրանթիպիս ( Հարցաքննիչ Դատաւորին ):

## ՄՈՒՍԹԱՆԹԻԳ

ԿԱՄ

## ՀԱՐՅԱՔՆՆԻՉ ԴԱՏԱԻՈՐ

Մուսթանթիպին պարտականութիւնն է աչքէ անցնել՝ ոստիկանութեան կողմէ կատարուած հարցաքննութիւնները և կասկածելիին յանցաւորութիւնը հաստատող բոլոր փաստաթղթերը, ապացոյցները, նշանները, ևն. ապա, իր կողմէն հարցաքննութեան ենթարկելով զայն՝ ստուգել անոր յանցաւորութիւնը կամ անմեղութիւնը:

Ոստիկանութիւնը իր կողմէն ժամանակաւոր կամ անպայման բանտարկութեան որոշում չի կրնար տալ ո՛ր և է կասկածելիի նկատմամբ. Մուսթանթիպին է

միայն որ՝ համոզուելով յանցաւորութեանդ կամ ինքզինքը համոզուած ենթադրելով, բանտարկութեան թուղթ մը կուտայ ձեռքդ և կը խրկէ բանտ: Այդ թղթին մէջ նշանակուած կ'ըլլայ արդէն քու յանցաւորութեանդ տեսակը:

Ի հարկէ Մուսթանթիզը մինչև բանտարկութեան այդ որոշումը տալը՝ իր քննութիւնները կատարած և հարցաքննութիւնները աւարտած պէտք է ըլլայ:

Խնդիր է իմանալ թէ Մուսթանթիզի՞ն առջև ի՞նչ փոքձութիւններ կան որ՝ կը սպառնան Յեղափոխականի մը:

Աւելորդ կը սեպենք կրկնութիւններ ընել. այն ամէն բռնադատութիւնները, տանջանքները, դաւերը, խարդախանքը՝ որ կրնայ կատարել ոստիկանութիւնը, նոյնութեամբ կարող են պատահիլ նաև Հարցաքննիչ դատաւորին անօրինութեամբ: Միայն, զանազանութիւնը հոն է որ Մուսթանթիզին առջև տուած հարցաքննութիւնները աւելի օրինական կը համարուին, հետեւաբար աւելի վաւերական են դատարանին առջև:

Օրինակի համար, ո՛ր և է վկայ՝ ոստիկանատան մէջ տուած իր վկայութիւնը կրնայ փոխել՝ առանց պատիժի ենթարկուելու. մինչդեռ Մուսթանթիզին առջև տրուած վկայութիւն մը անփոփոխելի հանգամանք կը կրէ և եթէ ետքէն դատարանին առջև վկան հակասութեան մէջ իյնայ—որովհետև Մուսթանթիզին վկայելու գացած ամէն մարդ պարտաւոր է դատարանին առջև ալ կրկնել իր ըսածները—կամ իր նախորդ ըսածներուն հակառակը վկայէ՝ ծանր պատիժի կ'ենթարկուի իբր խաբեբայ կամ սուս վկայ:

Օրէնքը՝ Մուսթանթիզին քննութիւնները վաւերական ճանչցած ըլլալով, բնականաբար անկէ կը պա-

հանջէ որ աւելի արդարասէր, աւելի ուղղամիտ և անա-  
չառ ըլլայ: Երբ անոր կողմէ յանցաւոր հռչակուած և  
դատարանի խրկուած անձ մը անպարտ արձակուի ու  
կարենայ հաստատել թէ Մուսթանթիզը անբաւական  
ապացոյցներով զինքը ամբաստանած է, այն ատեն կա-  
րող է վնասուող անձը դատ բանալ Մուսթանթիզին  
դէմ և պատիժի ենթարկել զայն: Թէև, սիրելի ընկե՛ր,  
հասկնալի է թէ Հայ մը, և ան ալ Քաղաքական յան-  
ցանքով անգամ մը մեղադրուողը, համարձակութիւն  
չունենար այս տեսակ յանդգնութիւն մը փորձել: Մենք  
միայն պարտաւոր ենք գիտնալ օրէնքին տրամադրու-  
թիւնները՝ որքան կարելի է մեր ինքնապաշտպանու-  
թեան ծառայեցնելու համար զանոնք:

Հարցաքննիչ դատաւորը՝ երբ տեսնէ թէ իր առջև  
նեղկայացող կասկածելիին հանր բաւական զօրաւոր  
ապացոյցներ չի կան՝ զայն անպարտ կ'արձակէ, առանց  
դատարանին յղելու: Հետևաբար, կարելի է դեռ դատա-  
բան չի գացած, օձիք ազատել ու դատաստանական եր-  
կար ու երկբայելի ատեաններուն երեսը չի տեսնել:  
Մուսթանթիզները վճռական դեր կրնան խաղալ՝ եթէ  
ուզեն և անոնք կրնեն ամէն ծառայութիւն, բաւական  
է որ միջոցը գտնուի՝ անոնց տրամադրութիւնը կա-  
կողցնելու: Կաշառքը յաճախ վտանգաւոր եղած է, բայց  
չատ հեղ ալ փրկարար:

Քաղաքական յանցաւորներէն շատերը ճողոպրած են  
դատալարութենէ ու հաւանական դատապարտութենէ,  
օգտուելով Մուսթանթիզներու ընչաքաղցուութենէն ու  
կաշառակերութենէն:

Ընդունինք պահ մը, ընկե՛ր, թէ դրամին ծառայու-  
թեան վրայ յոյս չես կրնար դնել և Հարցաքննիչ դա-  
տաւորդ կը մնայ անդրդուելի ու անկարեկիբ:

Հարցաքննութիւններդ աւարտած են արդէն: Մուսթանթիզը այլևս բաւական կը նկատէ իր հաւաքած փաստերն ու օրինական ապացոյցները. ուստի, թուղթ մը տալով ձեռքդ՝ քեզ ժամանակաւոր արգելարանէն հանել տալով կը խրկէ բանտ. ինչպէս ըսինք, այդ թղթիդ վրայ նշանակած ըլլալով արդէն յանցանքիդ տեսակը և բանտարկութեանդ թուականը՝ որմէ պիտի սկսիս հաշուել պատիժիդ տևողութեան վախճանը:

Հիւս, Մուսթանթիզը պատրաստելով իր տեղեկադիրը՝ կը կցի զայն հարցաքննութեանց թղթերուն ու քու մասիդ հաւաքուած բոլոր փաստաթղթերուն, և կը խրկէ Ասքասանիչ Ասեանին:

ՀԷՅԷԹՁ ԻԹԹԻՀԱՄԻԷ  
ԿԱՄ  
ԱՄԲԱՍՏԱՆԻԶ ԱՏԵԱՆ

---

Ամբաստանիչ Ատեանը կը կաշիուի նախնական դատարանի երկու անդամներէն և ընդհանուր դատախապէն:

Այս Ատեանին պաշտօնն է քննութեան ենթարկել թէ ոստիկանութեան և թէ Միւսթանթիզին առջև տուած բոլոր հարցաքննութիւններդ, քու մասին ձեռք բերուած բոլոր ապացուցութիւնները և զանոնք ընդհանուր քօնթրօլէ մը անցնելով՝ վճռել թէ իբրև յանցաւոր կարելի՞ է քեզ ամբաստանել ու դատաստանի խրկել: Ինչպէս կը տեսնուի, Ամբաստանիչ Ատեանին պաշտօնն է հսկել նախնական քննութիւններուն օրինաւորութեան և արդարութեան վրայ, որպէսզի ամսնդ մը զուր տեղը անիրաւութեանց և մեղսներու չի հանդիպի Արդարութեան կողմէ: Բայց ինչպէս ամէն

օրէնք թուրքիոյ մէջ՝ նմանապէս Արդարութեան ամէն  
ատեան ու հաստատութիւն՝ անուանական հանգամանք  
կը կրէ միայն և խրտուիլակէ մը աւելի ուժ ու նշա-  
նակութիւն չունի:

Ամբաստանիչ Ատեանը՝ երբ նշմարէ թէ զեղծումներ  
գործուած են Արդարութեան պաշտօնեաներուն— Մուս-  
թանթիգին կա՛մ ոստիկանութեան — կողմէ, երբ տեսնէ  
թէ փաստերը անբաւական ու անզօր են քու վրայ մւ-  
ղաբանք մը ծանրացնելու, պարտաւորութիւնն է ան-  
միջապէս քեզ անպարտ արձակել՝ առանց դատաստա-  
նական քննութեանց պէտք տեսնելու:

Քիչ անգամ տեսնուած է որ Ամբաստանիչ Ատեան  
մը՝ լոկ արդարութեան և օրէնքին յարգանքին հա՛նոր  
ան պարտ արձակած ըլլայ մէկը՝ որ Մուսթանթիգին  
կողմէ իբրև յանցաւոր խրկուած է իրեն: Պատահական  
պարագաներու մէջ՝ միշտ պէտք է համոզուած ըլլալ թէ  
կաշառփը գործ տեսած է:

Ընդհակառակը, Ամբաստանիչ Ատեանը երբ գտաւ  
այն օրինական պատճառները, որոնց հի՛շին վրայ քեզ  
յանցաւոր կը ճանչնայ, այն ատեն կը պարտաստէ յա-  
տուկ տեղեկագիր մը՝ որ կը կոչուի Իթթիհաւկաւէ կա՛մ  
Աւրասանագիր:

Աւրասանագրին մեջ պէտք է նշանակուած ըլլան  
այն գլխաւոր ամբաստանութիւնները և անոնց պատ-  
ճառաբանութիւնները, որոնցմով Ամբաստանիչ Ատեանը  
քեզ կ'ամբաստանէ իբրև յանցաւոր և քու դատաստանդ  
կը պահանջէ:

Աւրասանագիրն է որ դատաստանական ձևո՛ւհաս  
Ատեաններուն հի՛մ և պատճառ պիտի ծառայէ՝ դատա-  
վարութեան ձևո՛ւհարկելու: Առանց Աւրասանագրի՝ դա-  
տարանը չի կրնար գործի սկսիլ:



Անբաստանագրին մէկ օրինակը անմիջապէս բանտը բերուելով կը ներկայացուի քեզի, որպէսզի կարգալով քեզի համար նշանակուած ամբաստանութիւնները՝ գիտակցիս բանտարկութեանդ պատճառին և պատրաստուիս դատարանի:

Անբաստանագրին քեզի ներկայացուելու թուականէն մէկ շաբաթ ետքը, այսինքն ութերորդ օրը, առաջին անգամն ըլլալով կը կանչուիս դատարան: Այս ութ օրուան պայմանաժամը տրուած է քեզի՝ որպէսզի, եթէ գանգատի փաստեր ունիս, բողոքես Ամբաստանիչ Ատեանին տուած որոշման դէմ: Բայց քաղաքական ո՛չ մէկ հայ յանցաւոր փորձած չէ այս միջոցը՝ որքան անիրաւութեանց ալ որ ենթարկուած եղեր է Ամբաստանիչ Ատեանին կամ Մուսթանթիգին կողմէ: Որովհետև, այդ բողոքը պէտք է ուղղել Պօլիս՝ Վճռաբեկ Ատեանին (թէմիզ) և Հայաստանէն քաղաքական յանցաւորի մը Պօլիս ուղղած մէկ գանգատին լոկ պատասխանը տարիներով ետ կուգայ միայն, դր ատեն խեղճ բողոքարկուն բանտին մէջ գալարուելով պէտք է սպասէ. թող որ առանց այլևայլի այդ եկած պատասխանն ալ յայտնուի պէս աննպաստ պիտի ըլլայ գանգատողին:

## ԻՍԹԻՆԱՅ ԶԷԶԱ ՏԱՅԻՐԷՍԻ

ԿԱՄ

## ԵՂԵՌՆԱԴԱՏ ԱՏԵԱՆ

Ըսինք արդէն թէ Ամբաստանագիրն ընդունելէդ ութ օր ետքը՝ դատաստանական առաջին ատեանին կը կանչուիս:

Դատաստանական այս առաջին ատեանը կը կոչուի՝ քեշիլը մուհաֆիէ, դասաստանական կազմութիւն: Այդ օրը Նախագահը միայն քու անունդ, մականունդ և արհեստդ հարցնելով՝ կը նշանակէ քու դատիդ պաշտպանութեանը համար վկայուած փաստաբան մը: Որովհետև դատարանին պարտականութիւնն է՝ եղեռնական յանցանքով ամբաստանելի մը համար անպատճառ փաստաբան մը նշանակել իր կողմէն: Եթէ գո՛հ չես դատարանին նշանակած փաստաբանէն, արտօնուած ես քու յարմար դատածդ ցոյց տալ կա՛մ երկրորդ մըն ալ գործակից նշանակել անոր:

Աւելորդ չէ որ գիտնաս նաև Ատեանին կազմակերպութիւնը և անոր անդամներուն պաշտօնը:

Եղեռնադատ Ատեանը կազմուած է Թուրքիոյ մէջ վեց հոգիէ. Նախագահը, չորս անդամներ (որոնցմէ երկուքը հայկական վեց նա՛նագներուն մէջ ընդհանրապէս քրիստոնեայ կ'ըլլան) և ընդհանուր դատախազը:

Նախագահն է որ կը վարէ ատեանական նիստերը, հարցումներ կ'ուղղէ Արատասանելին և կը խօսի իր պաշտօնակից չորս անդամներուն կողմէ: Անդամները միշտ լուռ կը մնան և ո՛ր և է դիտողութիւն պարտաւոր են Նախագահին միջոցով յայտնել:

Ընդհանուր դատախազին պաշտօնն է միշտ որոնել հասարակաց իրաւունքը և պաշտպանել անմեղը:

Դատարանի այս կարևոր անձերէն դուրս՝ դատաստանական նիստերուն ներկայ է նաև քարտուղար մը, որուն պաշտօնն է դատավարութեան ըոլոր մանրամասնութիւնները արձանագրել: Այս արձանագրութեան աւերողութիւնն է որ ետքէն Ատեանը կարգալով, զայն խորհրդակցութեան և քննութեան ենթարկելով՝ պիտի տայ իր վերջնական վճիռը:

Իհարկ է դատավարութեան բոլոր նիստերուն անհրաժեշտաբար ներկայ պէտք է գտնուի նաև պաշտպան փաստաբանդ, առանց որուն Նախագահը չի կրնար ո՛ր և է նիստի մէջ քեզ դատել կամ քու դատիդ նայիլ:

Հետևինք հիմա դատավարութեան ընթացքին:

Ատենական այն նիստին մէջ՝ ուր առաջին անգամն ըլլալով քու խնդիրիդ քննութեան կը ձեռնարկէ դատարանը՝ նախ կը կարդացունին Միւսթանթիգին և Արաստանիչ Ատենանին տեղեկագիրները, որոնցմէ կազը ընդհ. դատախազը քու մասիդ եղած օրինական ամբաստանութեանց վրայ հիմնուելով՝ դատավարութիւն կը պահանջէ:

Այս օրինական ձևակերպութիւնները երբ աւարտին՝ Նախագահը խօսքը քեզի ուղղելով՝ կը յայտնէ թէ քու մասիդ այսինչ այնինչ ամբաստանութիւնները կան, ի՞նչ բաց ստրութիւն ունիս անոնց նկատմամբ:

Հետևաբար դուն պարտաւոր ես պատմել քու ձերբակալութեանդ պարագաները՝ ջանալով երևան բերել անմեղութիւնդ: Անտարակոյս մինչև այդ օրը արդէն տեղեկ կրնաս եղած ըլլալ թէ օրինական ի՛նչ կէտեր կան, որոնց պատճառով յանցաւոր նկատուած ես. որովհետև քեզի փաստաբան նշանակուած օրէն այլևս պաշտպան փաստաբանդ իրաւունք ունի ո՛չ միայն մանր սկզբիտ կերպով աչքէ անցնելու քու բոլոր հարցաքննութիւններդ, քեզի համար ասկէ անկէ եղած բոլոր աննպաստ վկայութիւնները, և ամէն փաստաթուղթ, այլ իրաւունք ունի նաև անոնց բոլորին պատճէնները առնելով քեզի բերելու:

Հետևաբար, կանխաւ կարող ես իմացած ըլլալ քու վրայ ծանրացած մեղադրանքները և զանոնք չէզոքացնելու, զանոնք հերքելու համար խօսելիքդ պատրաստել

ու օրինական միջոցները նախահոգալ:

Երբ անտեղեակ ու անպատրաստի ներկայանաս դատարանին, երբ գիտցած չրոյլաս այն բոլոր պարագաները՝ որ քու ամբաստանութիւնդ կը կազմեն, բնականաբար չես կրնար ինքզինքդ զօրւոր կերպով պատպանել, դիւրութեամբ կ'իյնաս հակասութեանց մէջ և չուարելով, յանկարծակիի գալով՝ առարկութիւն չես կրնար ցոյց տալ: Պարզ է հասկնալ թէ դատարանին առջև երևան բերած հակասութիւններդ, վարկպարտի պատասխաններդ, մէկ խօսքով՝ քու մասիդ եղած ամբաստանութիւնները հերքելու անկարողութիւնդ՝ այլևս դատպարտութիւնդ կ'ս վճռեն:

Ասկէ առաջ ալ պատենութիւն ունեցածք յիշելու թէ՛ միշտ աւելի դժուար է քանի մը բնկերններով կատարուած ձերբակալութեանց պարտգային հարցաքննութիւն տալ և դատաստանի ենթարկուիլ. որովհետեւ բնկերններդ կարող են յայտնութիւններ ընել, միւսոյն իրողութեան մասին քու ըսածներէդ տարբեր բացատրութիւններ տալ, և այսպէս ամբաստանութեան փաստ ու ապացոյց հայթայթել դատարանին: Արդ, անպայման անհրաժեշտ է սր դատալարութեան սկսելէ առաջ՝ բանտին մէջ իրար տեսնէք ընկերներով, հա՛ւաձայնութեան գաք դատարանին առջև ձեր տալիք պատասխաններուն և բռնելիք բնթագքին նկատմամբ, ու ջանաք մէկ ուղղութեամբ հերքել նախնական քննութեանց միջոցին ձեր ըրած խոստովանութիւնները, հակասութիւնները և տալ միւսոյն պատասխանները:

Նկատողութեան առնենք հիմա թէ նախնական հարցաքննութեանց միջոցին կատարած ձեր հակասութիւններէն որո՞նք ի՛նչ օրինական եղանակով կարելի է հերքել դատարանին առջև:

Իբրև յանցանք կարող է դատարանը ունենալ ձեզի դէ՛ր հետևեալ գլխաւոր անաստանութեան կէտերը.

- 1] Անձնական խոստովանութիւն:
- 3] Վնասակար թուղթեր:
- 4] Այլևայլ ապացոյցներ:
- 2] Աննպաստ վկաներ:
- 5] Ընկերոջ վկայութիւն:

Անձնական խոստովանութիւն. Բացատրած ենք արդէն թէ իր բարոյական բարձրութեան վրայ կանգնած և իր սիրտն գործին ու անձնական շահերուն գիտակցութիւնն ունեցող ճշմարիտ Յեղափոխական մը պէտք չէ որ խոստովանութիւններ ընելու զիջի: Սակայն պահ մը ենթադրենք թէ չի կրցար, ընկե՛ր, զինակալել տանջանքներուն և տկարացար:

Արդ, ո՛ր և է խոստովանութիւն անպայման պէտք է ուրանալ դատարանին առջև, և երբ նախազահր կանխաւ ըրած խոստովանութիւններդ կարգաւ տալով՝ բացատրութիւն ուզէ քեզմէ, պարտաւոր ես յայտնել թէ զանոնք խօսած ես մի միայն տանջանքներէ խուսափելու համար: Եւ կը պատճառ այն բոլոր չարչարանքները և խստութիւնները՝ որոնց ենթարկուած ես: Բայց, խնդիրը հոն է որ ի վիճակի ըլլալու ես արսցողցանելու զանոնք: Եւ ապացուցանելու համար ալ կա՛մ իխթիլաթէն մեկնեմ անմիջապէ՛ս ազատած պահուղ բողոք մը ներկայացուցած ըլլալու ես ընդհանուր դատախազին, կա՛մ վկաներ ունեցած, ու եթէ կարելի է երկուքն ալ:

Այլաստանեալ մը իր խոստովանութիւնները կրնայ բեկանել տալ դատարանին առջև միմիայն ապացուցանելով թէ՛ բուժարտօքանց տակ ըրած է զանոնք:

Շատ ընկերներ չեն կրցած հաստատել իրենց կրած ծեծը, տանջանքները և մարմնային խոշտանգումները,

որովհետև ժամանակին չեն բողոքած, երբ իրենց մարմնին վրայ դեռ թարմ են բռնադատութեանց հետքերը: Պէտք է սպասել դատավարութեան՝ բողոք ներկայացնելու համար: Ատեն անցնելով՝ սպիները և տանջանքներու նշանները կ'անհետանան և բժշկական քննութիւնը չի կրնար հաստատել իրողութիւնը:

Բժշկական տեղեկագիրէն զատ վկաներն ալ նոյնքան օրինական են և վճռական: Բայց, բաւական դժուար է զնտաններու և բանտային նկուղներուն մէջ ուղղափիտ, վստահելի մարդիկ գտնել՝ որ զան դատարանին առջև անլախօսէն հրապարակելու ոստիկանութեան և դատարանական պաշտօնեաններու գազանութիւնը: Արդէն այդ տեսակ վկաները բացառապէս ոստիկաններ, բանտապահներ կամ բանտարկեալներ կ'ըլլան, քանի որ այդ մութ, սարսափելի վայրերուն մէջ անոնցմէ զատ ուրիշ մարդ գոյծ չունի գիշեր ատեն: Դրոսը կ'սրող է երբեմն աներեւակայելին իրագործել՝ հասպտակելով այդ ստորին պաշտօնեաները, որոնք 5 զուրուշի համար հոգի կուտան:

Ինչ ալ ըլլայ՝ վստահութիւն ունենաա կամ ոչ բժշկական քննութեան, վկաներու հաստատումին նկատմամբ, պարտաւոր ես հրապարակով բողոքել դատարանին առջև ենթարկուած խոչտանգումներուդ դէմ: Ինչ ալ ըլլայ, հակառակ ա՛նէն հակասութեան, հակառակ ամէն խոստովանութիւններու և յայտնութեանց՝ դատարանին առջև ուրանալու ես նախնական հարցաքննութիւններու միջոցին տուած բոլոր վնասակար պատասխաններդ:

Ասով դատարանը չի կրնար բացարձակ գաղտնիար կազմել և միշտ յանցաւորութեանդ մասին կրակածանքի տեղ մը մնացած կ'ըլլայ:

Վնասակար քուղթեր: Վնասակար թուղթ անունով

պէտք է հասկնալ թէ՛ ձեռագիր, թէ գիրք: Վստահաբար գիրքը այնքան ծանր պատասխանատուութիւն չի հրաւիրեր իր վրայ, որչա՛ն ձեռագիրը: Յետոյ, գրքի մասին կարելի է դիւրաւ աւարկութիւններ գտնել, ըսելով թէ անիկա կարդացած չես, տեղեկութիւն ունեցած չես անոր պարունակութեան ևն. ևն. : Մինչդեռ ձեռագիրը՝ շատ աւելի վնասակար հանգամանք կը կրէ, երբ մանաւանդ ձեռագիրը բուն իսկ քու ձեռքէդ ելած է: Եթէ ուրանաս թէ անիկա քու կողմէդ գրուած է, դատարանը Քինիչ Յանձնաժողով մը կը նշանակէ անֆիլապէս, որ տարբեր տարբեր գրիչներով քեզի այլևսյլ գրեր գրել ստալով դիւրութեամբ կը հաստատէ քուկդ ըլլալը: Հետևաբար, ուրանալէ աւելի նախաւեճաշ է մեղացուցիչ պարագաներ գտնել, սակայն տարբեր բան է, երբ նոյն ձեռագիրը կը կրէ այն տեսակ յայտնութիւններ՝ որոնց ինաստը աղէտալի ու ծանրակշիռ է. այս պարագային՝ քեզի կը մնայ ուրանալ և միջոցներ գտնել զայն չէզոքացնելու:

Այլեւայլ ապառոյցներ: Գրէթէ անկարելի է տեսակահապէս սահմանել թէ ինչ տեսակ ապացոյցներ կարող են երևան գալ Ամբաստանեալի մը նկատմամբ: Բայց ինչ ալ ըլլայ անոնց բնութիւնը, պէտք է համոզուիս, սիրելի ընկե՛ր, թէ ճարտար փաստաբան մը կարող է եթէ ոչ բոլորովին բեկանել, ոչնչացնել զանոնք, գէթ մեղմացնել, թեթեցնել և քեզի ծանրապէս վնասելու հանգամանքէն չէզոքացնել:

Անկարաս վկաներ: Փաստաբանդ արդէն ժամանակին պաշտօնական թղթերէն կընայ իմանալով քեզի յայտնել այն անձերուն անունները՝ որոնք պիտի գան հակառակ վկայութիւններ տալ քու մասիդ. ուստի անհրաժեշտ է որ դեռ դատարանը զանոնք չի կանչած՝

դուն միջոցներ ձեռք առնես վկաները հատուկելու և ետ կեցնելու զիրենք՝ ջեզի վնասելու հանգամանք ունեցող վկայութենէ։ Բնականաբար Մուսթանթիզին առջև վկայած աճ մը չի կրնար իր վկայութիւնները փոփոխել դատարանին առջև՝ առանց պատիժի ենթարկուելու։ Ուստի, անիկա իր նախկին վկայութիւնը ջուրը ձգելու համար բաւական է որ խոստովանի թէ հակահրութիւն կամ թշնամութիւն մը ունի ջեզի դէմ։ Օրինակ, ամէն վկայի յայտնութենէ ետք՝ անպատճառ նախագահը ջեզի կը հարցնէ թէ ի՞նչ առարկութիւն ունիս անոր դէմ։ Երբ դուն յայտնես թէ այդ վկային հետ այսինչ այ՛ի՛նչ աճնական հակառակութիւնն ունեցած ես, բաւական է որ անիկա հաստատէ ատիկա, իր վկայութիւնը ջնջուած կ'ըլլայ արդէն։

Հակառակ պարագայի՛ն, երբ այդ վկաները կը մընան իրենց նախկին աննպաստ վկայութեան վրայ, անհրաժեշտ է որ անոնց վկայութիւնը չէզոքացնելու և չբացնելու պարագաներ գտնու։ Անձի մը աննպաստ վկայութիւնը կրնաս բեկանել ըստ օրինի՝ երբ հաստատես թէ նոյն վկան անձնակրան հակախրոփուն ունի քեզի դէմ և պատկան իրողութիւններ՝ որոնցմով յառաջ եկած է նոյն հակասութիւնները և հաստատես թէ սուտ կը խօսի։ Ասոնցմէ զատ՝ կարող ես նաև քու կողմէդ նոյն հակառակորդ վկային դէմ նշանակուած ուրիշ վկաներով՝ հաստատել թէ անիկա ուղղամիտ վկայ մը չէ, թէ անոր վկայած այս կամ այն օրը դուն այսինչ տեղը կը գտնուէիր, ևն. ևն.։

Դատարանին առջև վկային դերը մեծ նշանակութիւն ունի. որովհետև ո՛ր և է իրողութիւն կը հաստատուի երկու կամ աւելի վկաներով։ Դատարանը՝ առանց հաստատուն ապացոյցներու և առանց վկանե-



ըռով չի կրնար դատապարտուի ո՛չ ոք, եթէ նոյնիսկ ամբողջովին հասողուած ալ ըլլայ թէ իր առջև ներկայացող Ա՛րքաստանեալը իրաւցինէ փնտռուած իսկական յանցաւորն է: Անոր համար, պէտք է գնտնաւ, ընկե՛ր, թէ վկան ճակատագրական ազդեցութիւն ունի քու անպարտ արձակուելուդ կամ դատապարտութեանդ մասին և անոր համեմատ վարուիս:

Ընկերոջ վիրշուքիւն: Ուրիշ առթիւ ալ պատեհութիւն ունեցանք ըսելու թէ միւսնոյն խոփերով քեզի հետ արքաստանուած ընկերոջդ աննպաստ վկայութիւնները աւելի իրեն վնասելու հանգամանք ունին՝ քան քեզի. բայց, այդ վկայութիւնը որքան ալ օրինական բացարձակ ուժ չունենայ՝ ասով մէկտեղ կրնայ կասկածներ կաթեցնել քու մասիդ դատաւորներուն մտքին մէջ և գէշ տրամադրել զանոնք քեզի նկատմամբ: Ուստի, ընկերոջդ շահը կը պահանջէ որ նախնական հարցաքննութեանց կամ Միւսթանթիգին առջև խօսած վնասաբեր յայտնութիւնները ուրանայ դատարանին առջև: Հակառակ պարագային, քեզի կը մնայ միւսիսկան անոր աննպաստ խօսքերուն դէմ առարկել թէ անիկա իբրև անբասանեալ՝ բնական է որ իր յանցանքը թեթեցնելու կամ ինքզինքը արդարացնելու համար՝ ուրիշներու վերադրէ իր արարքները: Պէտք է մերժեալ անոր բոլոր ամբաստանութիւնները, առանց քու կողմէդ ամբաստանելու զինք, որովհետև կըր գուն ալ սկսիս պարագաներ թուել թէ անիկա գործած է այսինչ յանցանքները՝ արդէն հաստատած կ'ըլլաս քու յանցաւորութիւնդ:

Ասոնք են անա այն գլխաւոր պարագաները՝ որոնք կը կազմեն դատաւարութեան մը էական սարքերը և որոնք կը վճռեն անձի մը դատապարտութիւնը կամ կը հաստատեն անոր անմաղութիւնը:

Դատավարութեան ընթացքին մէջ՝ երբ առջին անգամ նոր քննութիւն մը բանալու, քու անմեղութեանդ անպարտօններ մէջտեղ դնելու պէտքը տեսնես, հար՛ջ է որ անյապաղ մասնաւոր աղերսագիր մը ներկայացնես այդ մասին ընդհանուր դատախազին և առաջարկես խնդիրքդ: Բոլոր հետաքրքրութեամբ և աչալրջութեամբ հետեւելու ես դատիդ մանրամասնութիւններուն ու անոր առած երեւոյթներուն, որպէսզի կարող ըլլաս անձիդ պաշտպանութիւնը բաղդին միայն չի յանձնել:

Մինչև որ Նախագահը պաշտօնապէս չէ յայտարարած թէ « մահա Խ. Կ խիթաւ պուշը », ( դատավարութիւնը աւարտած է ), միշտ արտօնութիւն ունիս նոր աղերսագիրներ սալ և նոր քննութիւններ առաջարկել պատարանին՝ ինչպես անմեղութեանդ:

Իսկ, երբ նախագահը յայտարարէ դատավարութեան աւարտիլը, այն ատեն վերջին խօսքը կը մնայ փաստաբանիդ և ընդհանուր դատախազին, որոնցմէ ետք պէտի տրուի վճիռը:

Բայց, նախ Նախագահը վերջին անգամն ըլլալով հեղ մըն ալ քեզի կը հարցնէ թէ ուրիշ ըսելիք մը ունի՞ն. բնախնաբար յիշատակելով դատավարութեան գլխաւոր պարագաները, դուն կը թուես անմեղութեանդ անպարտօնները և կը խնդրես որ դատարանը իր արդարասիրութեամբ հաստատէ անմեղութիւնդ:

Քեզմէ ետք կը խօսի փաստաբանիդ իր պաշտպանողական ճառը, ուր ամփոփուած պէտք է ըլլան այն բոլոր փաստերը որ երևան եկած են դատավարութեան ընթացքին մէջ:

Փաստաբանիդ ևսքը՝ ընդհանուր դատախազը կը խօսի իր ճառը՝ պարզելով իր տեսութիւնները անմեղութեանդ կամ յանցաւորութեանդ նկատմամբ:

the *de facto* and *de jure* status of the region. The *de facto* status is determined by the actual control of the region by the government of the state. The *de jure* status is determined by the international law of statehood.

As a result of the *de facto* and *de jure* status of the region, the international law of statehood may be applicable to the region. The international law of statehood is applicable to the region if the region is a state or if the region is a territory of a state. The international law of statehood is not applicable to the region if the region is a territory of a state that is not a state.

The international law of statehood is applicable to the region if the region is a state or if the region is a territory of a state. The international law of statehood is not applicable to the region if the region is a territory of a state that is not a state.

The international law of statehood is applicable to the region if the region is a state or if the region is a territory of a state. The international law of statehood is not applicable to the region if the region is a territory of a state that is not a state.

The international law of statehood is applicable to the region if the region is a state or if the region is a territory of a state. The international law of statehood is not applicable to the region if the region is a territory of a state that is not a state.

The international law of statehood is applicable to the region if the region is a state or if the region is a territory of a state. The international law of statehood is not applicable to the region if the region is a territory of a state that is not a state.

The international law of statehood is applicable to the region if the region is a state or if the region is a territory of a state. The international law of statehood is not applicable to the region if the region is a territory of a state that is not a state.

The international law of statehood is applicable to the region if the region is a state or if the region is a territory of a state. The international law of statehood is not applicable to the region if the region is a territory of a state that is not a state.

The international law of statehood is applicable to the region if the region is a state or if the region is a territory of a state. The international law of statehood is not applicable to the region if the region is a territory of a state that is not a state.

The international law of statehood is applicable to the region if the region is a state or if the region is a territory of a state. The international law of statehood is not applicable to the region if the region is a territory of a state that is not a state.